

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՄԸՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت


marzig

SPORTS MAGAZINE

հտ. ՏԱՐԻ, 2006, ԹԻԻ 7-8 (289-290) VOL. XXV N°7-8 السنة الخامسة والعشرون العدد السابع - الثامن



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ  
ՑՐԴ ԲԱՆԱԿՈՒՄ



# ՀԱՐԱՆԱԿԱՆ ԺՈՒՏ, ԿԵՑՈՒՄՔ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



## «...եր Ծանայելի Հայրենիք»



## «Մոճ Ուսրբս»





# ԹԻՒԻՆ ՆԻՒՆԵՐՆ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزليک مجلة رياضية شهرية تصدرها جمعية المونتيم الرياضي



## ՀԱՄԱ-Հ. Մ.Ը. Մ.ԱԿԱՆ ՏՐԴ ԲԱՆԱԿՈՒՄ

■ Խմբագրական/Մակարդը	2
■ Համա-Հ. Մ.Ը. Մ.ական ճրդ բանակումին բացումը կը սերմանե հայրենիքի պատկանելիութեան գիտակցութիւնը	3
■ Եռաբլուրը եւ Ծիծեռնակաբերդը բանակողներու ուխտավայրեր	8
■ Գառնի, Գեղարդ, Սեւանայ լին այցելութիւնները հայօրէն զգալու, ապրելու եւ գործելու պատգամը կը փոխանցեն բանակողներուն	11
■ Ազգային-դարաւոր արժեքներու հետ հաղորդութիւն	14
■ Հ.Մ.Ը.Մ. կը վերանորոգէ Սարդարապատի յաղթանակին արժանի դառնալու իր ուխտը	18
■ Բանակումը ծանօթացնող մամուլայ ասուլիսը	21
■ «Միշտ պատրաստ»ը կ'ունենայ իր գործնական արտայայտութիւնը	22
■ Հայաստան՝ աղբիւրը մեր գօրութեան, երաշխիքը մեր յաւերժութեան, արտայայտութիւնը մեր ամբողջականութեան	24
■ Փակման հանդիսութիւնը կը վերահաստատէ հայրենի հողին ու արժեքներուն կառչած մնալու Հ.Մ.Ը.Մ.ական յանձնառութիւնը	27
■ Հաւատարիմ մեր պապերու անժամանցելի կտակին	31
■ Ի մի հաւաքուիլ	33
■ Արժանի մնալը եւ արժանի լինելը նոր Սարդարապատին	35
■ Պահանջատէր ենք մեր անժամանցելի իրաւունքներուն	37
■ Լուսարձակի տակ	38

Այս թիւով տեսնել նաեւ՝ բանակողներու ընդհանուր պատկերը (էջ 4), Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ողջոյնի գիրը համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրդ բանակումին (էջ 6), «Բանակում 06 մասնակիցներ» (էջեր 16, 17, 19, 20, 22, 25, 26, 28, 29, 31, 33, 35, 37, 38, 39, 40) եւ հաղորդագրութիւններ (Գ. կողք):

**Թիւին հետ՝ բանակումին նուիրուած որմապղ:**

Մարզական ամսաթերթ  
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 ԻՉ. ՏԱՐԻ, 2006, ԹԻԻ 7-8 (289-290)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ  
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Աբօ Մոսիկեան  
 Գօգօ Մկրտիչեան

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ  
 «Մարզիկ» շնորհակալութիւն  
 կը յայտնէ բոլոր անոնց, որոնք  
 տեղեկատուութեամբ կամ  
 լուսանկարներով նպաստեցին այս  
 յատուկ թիւին պատրաստութեան:

Էջադրում - Չարեհ Չէօրէքճեան  
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրճ Հանուտ, Ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

### ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 3000 լ.ն.:  
 Տարեկան բաժանորդագրութեան  
 սակ ճշրուած է 35000 լ.ն.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԼՈՒՄԻՆ

# ՄԱԿԱՐԴԸ

**Ա**նսպասելի արագությամբ անցան համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրդ բանակումին տասր օրերը:

Բիրականի բանակավայրին դրօշները, չորս տարուան համար, հանգչած են հիմա: Սակայն, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին անդամները, երկիր է երկիր, քաղաք է քաղաք, տակաւին կ'ապրին բանակումին առթած բերկրանքը: Ականջներու մէջ կը հնչեն պատուիրակութիւններու տեսակ-տեսակ կանչերը: Հոգիները արձագանգ կու տան խարուկահանդէսներու խանդավառ ծափերուն եւ ազգային-յեղափոխական երգերուն: Աչքերէ չի հեռանար «Նահատակ ցեղի անմահներ»ուն անվեհեր երթը Երեւանի «Հանրապետութեան» հրապարակին վրայ: Ու սրտերը կը դողան Հ.Մ.Ը.Մ.ական շարքերու յաղթական տողանցքէն ու այեծածան դրօշներէն՝ Ծիծեռնակաբերդի, Եռաբլուրի եւ Սարդարապատի մէջ:

Բոլորը ոգևոր ու հպարտ վերադարձած են իրենց տունները: Պատրաստ՝ աւելի ամո'ւր կոխելու հողին, աւելի ամո'ւր կառչելու հայու ապագային:

Եւ այս է կարեւորը, հիմնականը, հայրենի հողին ու արժէքներուն քաղցրութիւնը ճաշակելէ ետք, հայու ինքնաձայնման, սեփական ուժի վերարժեւորման փաստը՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական նման բանակումներու ընդմէջէն: Մընացեալը մանրամասնութիւն է, ծանօթ յայտագիր:

Մնացեալը սկառուտական կանչ է ու երգ, փոխադարձ ծանօթացում, յիշատակի նկար, յուշանուէրներու յանձնում իրարու, պատասխանատուներու, արժանաւորներու:

Բայց գլխաւոր արժանաւորը՝ ի'նքը, Հ.Մ.Ը.Մ.ն է, իբրեւ միութիւն:

Գլխաւոր ու մեծագոյն ուրախացողը՝ ինքը, հայ ժողովուրդը, որ գիտէ Հ.Մ.Ը.Մ.ը ապրեցնել եւ Հ.Մ.Ը.Մ.ով ապրիլ, անով տեսարար իր արիւնը թարմացնել, ազգային շունչը վառ պահել, պօրացնել իր հաւատքը՝ Հ.Մ.Ը.Մ.ի բանակումներէն քաղած ներշնչումներով:

Այլապէս ի'նչ կ'արժեն բանակումները, տեղական, շրջանային թէ համա-

Հ.Մ.Ը.Մ.ական, եթէ անոնք լեցուած չեն ազգային խանդավառութեան եւ հպարտութեան տրամադրութիւններով:

Ի'նչ կրնան տանիլ քոյր պատուիրակութիւններու անդամները իրենց հետ, եթէ ոչ՝ ազգային ամբողջութեան անբաժանելի մէկ մասնիկը ըլլալու գիտակցութիւնը եւ այդ գիտակցութենէն մղուած՝ ամբողջը հպօրացնելու եւ ամբողջով հպօրանալու յանձնառութիւնը:

Երեւոյթները պերճախօս են: Ազգ մը ազգ է իր պատմութեան եւ արեան կապերով: Սակայն ան կը դադրի ազգ ըլլալէ, երբ հայրենի հողէն հեռու ապրելով կը կորսնցնէ ազգային ոգին:

Հայրենիքի մէջ կատարուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները եւ սերտ շփումները հայրենի ժողովուրդին հետ, վառ կը պահեն այդ ոգին: Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական ընտանիքին մէջ սկառուտը կը դադրի միայն իր եսին մասին մտածելէ: Հաւաքական կեանքը, ազգային իտեպներու ներշնչումով գեղեցկացած, կը բազմապատկէ անոր թաքուն ուժերը:

Ու հաւանաբար ա'յս է գաղտնիքը, որ միշտ երիտասարդ ու առոյգ կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ը: Կենարար այս ոգին է, որ ջլապինդ արմատը կը կապմէ Հ.Մ.Ը.Մ.ի կաղնիին, որ տեսարար նոր ճիւղեր կ'արձակէ երկիրէ երկիր, հոն ուր սերունդը հայ պահելու հարց կայ, հոն ուր ազգային գոյատեւման երաշխիքի կարիքը կայ:

Վարագոյրը իջած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրդ բանակումին վրայ, սակայն վարագոյրը փակ պիտի չմնայ, պէտք չէ մնայ երկար ժամանակ: Յիշատակները, որքան ալ քաղցր ու անմոռանալի ըլլան, շահեկանութենէ պուրկ կը մնան, եթէ շրջաններու մէջ չվերածուին վերանորոգ ուժի, միութենական ստեղծագործ թափի եւ աշխատանքի:

Յիշատակները ալպոմներ գեղեցկացնող նկարներ միայն կը դառնան, եթէ հայ ոգիով չբազմապատկեն նորահաս սերունդները, մակարդը հանդիսանալու համար գոյատեւման մեր վաղուան պայքարին համար այնքա'ն անհրաժեշտ նո'ր ոգևորութիւններու եւ ազգային նո'ր հպարտութիւններու:



# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՏՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԲԱՅՈՒՄԸ ԿԸ ՄԵՐՄԱՆԷ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆԸ

Հայրենի հողին վրայ, Արագածի լանջերուն, Արարաբի պիրական հովանաւորութեան ներքեւ, աշխարհի 16 երկիրներէն Բիրական համախմբուած շուրջ 650 սկաուտներ, Երկուշաբթի, 31 Յուլիս 2006ին բացման ազդանշանը փոփոխ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրականումին:

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան Արագածոտնի Թեմի Առաջնորդ Թորգոմ Վրդ. Տօնիկեան, Պաղպապէն Տ. Նարեկ Քինյ. Իշխանեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Սկրպիչեան, Կարպիս Գալստասազաղեան, Պապրիկ Կիւլպէնկեան, Յարութիւն Յարութիւնեան եւ Սարգիս Տէր Պեպրոսեան, Հ.Յ.Գ. Բիրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, Հ.Յ.Գ. Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուսարամեան, Մարտէյի Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի արեւնապետ Յիլիփ Ղազարեան, հիւրեր եւ մեծաթիւ քրքակիցներ:

Հանդիսութեան սկիզբը, շրջաններու ներկայացուցիչներու կողմէ կատարուեցաւ դրօշակի արարողութիւն: Բարձրացան Տուագոյնը, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը եւ անոնց կողքին՝ 16 երկիրներու դրօշները:

Դրօշակի արարողութեան յաջորդեցին խօսքերը: Բանակումի փոխ խմբապետուհի քոյր Լուսին Գազէզեան, Լի-

բանանէն, ընթերցեց Լիբանանի Շրջանային Վարչութեան ողջոյնի գիրը, տրուած ըլլալով որ շրջանը երկրին ծանօթ պայմաններուն բերումով կը բացակայէր բանակումէն: Գիրին մէջ կ'ըսէր, թէ հակառակ ամիսներու վրայ երկարած պատ-



րաստութիւններուն, Լիբանանի պատ-  
ւիրակութիւնը քաղաքական ծանօթ  
պատճառներով, ցաւ ի սիրտ, չի կրնար  
իր մասնակցութիւնը բերել համա-  
Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին, սակայն  
իր ողջոյնը կը փոխանցէ բանակող քոյ-  
րերուն եւ եղբայրներուն՝ յաջողութիւն  
մաղթելով անոնց աշխատանքներուն:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-  
Ս.Կ-ի Կեդրոնական Վարչութեան ատե-



## ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրոյ  
բանակումին կապճը հաշուեց  
655 բանակող, մասնակցու-  
թեան հետեւեալ պատկերով.-

Անգլիա	42
Արեւելեան Մ. Ն.	91
Արեւմտեան Մ. Ն.	143
Աւստրալիա	7
Աւստրիա	3
Գանատա	102
Երուսաղէմ	25
Իրաք	18
Լիբանան	1
Հայաստան	17
Հարաւային Ամերիկա	46
Յորդանան	8
Յունաստան	19
Սուրիա	28
Քուէյթ	31
Ֆրանսա	18
Իրանի Հայ Մշակութային «Արարատ»	
Կապմակերպութիւն եւ «Սիփան», «Նայիրի»	
մշակութային միութիւններ 35	
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ	5
Խմբապետական գործադիր մարմին	10
Անձնակազմ (գործավար, բժիշկ, խոհարարներ ...)	6



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս  
Գապասագալեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կեդրոնական Վարչութեան  
ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան կը փոխանցեն իրենց խօսքերը:

նապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան: Ան բա-  
րի գալուստ մաղթեց բոլորին, յուսարով  
որ բանակումը անմոռանալի յիշատակ-  
ներ կը ձգէ բանակողներուն մօտ:

Խօսք առաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական  
Ծրոյ բանակումի ընդհանուր խմբապետ  
եղբ. Ալէք Խաչատրեան: Ան յայտնեց, որ  
տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի նպա-  
տակը եղած է պատանիները դաստիա-  
րակել Ֆիզիքապէս, բարոյապէս եւ հո-  
գեպէս, անոնց մէջ զարգացնելով պա-  
տասխանատուութեան, կարգապահու-

թեան եւ փոխադարձ օգնութեան գի-  
տակցութիւնը: Ան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը  
աշխատած է դաստիարակել այնպիսի  
ազգայիններ, որոնք պիտի դառնան  
Հայ Դատի դրօշակիրներ եւ միշտ պատ-  
րաստ պիտի ըլլան սատար հանդիսանա-  
լու իրենց հայրենիքին: Եղբայր Խաչատրը-  
եան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը  
ամուր, խիտ շարքերով եւ կարգապահ  
ընթացքով քալած է, կը քայլ եւ պիտի  
քայլ իր ժողովուրդին հետ, ամրացնե-  
լով իր նկարագիրն ու գիտակցութիւնը՝



ով կը քալենք դէպի մէկ ընդհանուր նպատակ: Տարբերութիւնը միջոցներու մէջ է: Մենք քաղաքական ուղին ընտրած ենք, դուք աւելի շատ՝ մարզական, սկաուտական, մշակութային ուղին: Դուք իրականութեան մէջ մեր թեւն ու թիկունքն էք: Մենք ձեզմով աւելի հզօր ենք: Դուք կամաւոր բանակ էք: Կամաւոր բանակ, որ պէտք է գաղթօճախներուն թէ հայրենիքի մէջ տարա-



**Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան կը փոխանցէ ողջոյնի իր խօսքը՝ Վարդ՝ Արագածոտնի Թեմի Առաջնորդ Թորգոմ Վրդ. Տօնիկեան:**

Հաւատարիմ մնալու հայութեան արդար Դատին:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրի բանակումի ընդհանուր խմբապետը ըսաւ, թէ սկաուտական կեանքի ընթացքին, մասնակիցները իրենց բանակավայրերը վերածած են ժամանակաւոր փոքր հայրենիքներու, սակայն վստահաբար բոլորն ալ ունեցած են այն հաւատքը, թէ կու գայ օրը, երբ մեր հայրենիքը կը դառնայ բոլորիս մնալուն բնակավայրը: Ապա, ան յոյս յայտնեց, որ բանա-

կումը ըլլայ ոչ միայն հայրենիքի ծանօթացում, այլ՝ բոլորին ներշնչէ միասնականութեան վեհ սկզբունքը, ուժեղ հաւատքը՝ ըլլալու «միշտ պատրաստ»:

Խօսք առաւ նաեւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան: Ան հայրենի հողին վրայ բարի գալուստ մաղթեց բոլորին, եւ ըսաւ. «Այստեղ ձեր հայրենիքն է, որուն համար ստեղծուած է Հ.Մ.Ը.Մ.ը: Դաշնակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ը կը նկատէ իր ուղեկից կազմակերպութիւնը: Մենք նոյն ոգի-



**Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՂՁՈՅՆԻ ԳԻՐԸ՝ ՀՄՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՏՐԳ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ**

*Մեծայարգ հիւրեր,  
Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,*

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ջերմագին բարեւներ կը փոխանցէ համահայրենացի Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումի խմբապետական կազմին ու մասնակիցներուն, վիրաւոր Լիբանանէն:



Այս բանակումը աշխարհի չորս ծագերէն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն պատկանող սկաուտները կը համախմբէ մայր հայրենիքի հողին վրայ, նպատակադրելով իւրաքանչիւր մասնակցողի մէջ աւելի եւս ամրապնդել Հ.Մ.Ը.Մ.ի ոգին եւ հայրենասիրութիւնը, նաեւ առիթը ընծայելով ծանօթացման նոր հորիզոններու՝ աշխարհի տարբեր երկիրներէ խմբուած Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտներու:

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկաուտական Խորհուրդին հետ գործակցաբար, ծրագրած էր ու նախապատրաստական բոլոր աշխատանքները տարած՝ ներկայ գտնուելու այս բանակումին: Սակայն, դժբախտաբար, Լիբանանի մէջ ծագած անակնկալ պատերազմը ականայ եւ սրտցաւորէն արգելք հանդիսացաւ մեր մասնակցութեան:

*Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,*

Կը հաստատենք, որ հակառակ մեր ֆիզիքական բացակայութեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի ընտանիքը, յատկապէս սկաուտական կազմերը, ներկայ պիտի ըլլան ձեզի հետ հոգուով ու սրտով:

Յուսարով որ համահայրենացի Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումը կ'ըլլայ ամբողջական՝ մասնակցութեամբը Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր շրջաններուն եւ մանաւանդ Լիբանանի շրջանին, յաջողութիւն կը մաղթենք ձեզի եւ կ'ողջունենք բանակումին պատասխանատու մարմիններն ու մասնակցողները՝ մէկ առ մէկ:

ծողը ըլլայ բարութեան, մարդկայնութեան, մարդկային զգացումներու եւ հայկական մշակոյթի»:

Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանեան դերակատարութեան մասին խօսելով, Հ.Յ.Դ.Բիւրոյի ներկայացուցիչը հաստատեց. «Այսօր, մեր հայրենիքին ամենէն շատ հարկաւոր է բարութիւն: Հ.Մ.Ը.Մ.ը ընելիք ունի Հայաստանի եւ հայ ժողովուրդի մէջ, որպէսզի կարողանայ ստեղծել քաղաքացիական հասարակութիւն, այնպէս մը որ Հայաստանը դառնայ այն երկիրը, ուր ապրիլը հպարտութիւն ըլլայ»:

*Խօսքին աւարտին, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչը բանակումի ընդհանուր խմբապետէն յիշատակ ստացաւ բանակումի փողկապը:*

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անունով խօսք առաւ եղբայր Կարպիս Գապասագալեան: Եղբայրը իր խօսքին մէջ շեշտը դրաւ համահայրենացի Հ.Մ.Ը.Մ.ական բանակումը հայրենի հողին վրայ կատարելու կարեւորութեան վրայ՝ դիտել տալով, որ Հ.Մ.Ը.Մ.ը ինքնին համայն հայութեան համախմբման եւ միակամ ըլլալու հիմնական երդիքներէն մէկն է: «Անկասկած, որ սա պահուն մեզմէ իւրաքանչիւրը պատած է անբացատրելի հրեռանք մը: Հոգին ու միտքը կ'ապրի առանձ-





նայատուկ գգացումներով, որոնցմով մենք ինքնաբերաբար կը վերանանք մեր աշխարհէն եւ բոլորս միատեղ կը վերադառնանք հո՛ւ, մայր հայրենիքի հողին վրայ, Արագածի փեշերուն տարածուող այս հողատարածքին վրայ, անկէ մշտնջենական սնունդ առնելու եւ մեր ուխտը վերանորոգելով՝ Արարատին դիմաց կանգնած ըսելու. օր մը անպայման՝ պիտի հասնինք լանջերուդ», *Հաստատեց եղբայր Գապասագալեան:*

*Իր խօսքին աւարտին, եղբ. Գապասագալեան նշեց, որ Հայուժեան զաւակներուն միջեւ խորութիւն չդնելը, իբրեւ իսկական Հայ ապրիլն ու գործելը եղած է Հ.Մ.Ը.Մ.ի եւ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներուն նպատակը:*

«Այսօր, աւելի քան երբեք, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտներ լաւապէս պիտի իւրացնէք ձեր նշանաբանը՝ հաւատքով ու նուիրումով պիտի գործէք «Միշտ պատրաստ՝ հայրենիքին համար» եւ ոչինչ պիտի զլանաք անոր:



Առաւել եւս, ձեր խոստումին ու երդումին յանձնառութեամբ հաւատարիմ պիտի մնաք Հ.Մ.Ը.Մ.ի վեհ սկզբունքներուն եւ անաղարտ պիտի պահէք մեր փառապանծ նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»», *եզրափակեց եղբ. Գապասագալեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անունով բացուած յայտարարեց բանակումը*

(խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 33):

*Հանդիսութեան փակման խօսքը փոխանցեց Արագածոտնի Թեմի Առաջնորդ Թորգոմ Վրդ. Տօնիկեան: Ան վկայակոչեց պատմաճօր Խորենացիի նշանաւոր այն խօսքը, որ թէեւ մենք փոքր ածու ենք, բայց ունինք յիշատակութեան արժանի շատ գործեր:*

Ապա, իր խօսքը Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն ուղղելով, ան ըսաւ. «Պատրաստըւած, խելացի եւ գիտակից երիտասարդութիւնը շաղախուած է հաւատքով, յոյսով եւ ուժականութեամբ: Այս ժողովուրդին կեանքը յաւերժ է: Ես կ'ուզեմ մաղթել, որ այս պատգամը մեր ուղեկիցը ըլլայ, որովհետեւ հայրենիքի մէջ ըլլալ կը նշանակէ երիտասարդ, առոյգ, ուժեղ հաւաքականութեան մէջ ըլլալ»:

*Խօսքերէն ետք, Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:*

*'Made from one single slice of natural Australian opal'*



*Classique*  
OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia*

*Phone: +61 2 9290 2199*

*fax: +61 2 9262 1630*

*Website: www.classiquewatches.com*

*Email: Info@classiquewatches.com*



# ԵՌԱՔԼՈՒՐԸ ԵՒ

**Բ**անակումին երրորդ օրը, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ բանակումի խմբապետական կազմին ընկերակցութեամբ, բանակող քոյրերն ու եղբայրները իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Եռաբլուրի մէջ իրենց վերջնական հանգիստը գտած Արցախեան պայքարի զոհերուն: Ապա, անոնք ուղղուեցան Միծեռնակաբերդ, ուր խոնարհեցան Եղեռնի մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին դիմաց:

Այսպէս, Չորեքշաբթի, 2 Օգոստոս 2006ի յետմիջօրէին, մասնակիցները ուղղուեցան Եռաբլուր: Մուտքին, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան: Ան սկստական կազմերէն խնդրեց երկու վայրկեան լուռութեամբ յարգել յիշատակը Արցախեան ազատամարտի հերոսներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարօ Թիւթիւնճեանին, որ բանակումին նախապատրաստական աշխատանքները տարաւ, առանց սակայն տեսնելու անոնց իրագործումը: Ապա, տպաւորիչ մթնոլորտի մէջ, բոլորը

տական աշխատանքները տարաւ, առանց սակայն տեսնելու անոնց իրագործումը: Ապա, տպաւորիչ մթնոլորտի մէջ, բոլորը





# ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐՂԸ

## ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐ



երգեցին «Յառաջ նահատակ» քայլերգը, որմէ ետք անոնք լուռ եւ կարգապահ շարքերով ուղղուեցան նահատակներուն շիրիմները: Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը մեխակներ գետեղեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նահատակ անդամ եղբ. Վարդան Բախշեանի եւ Հ.Մ.Ը.Մ-ական եղբայր Վիգէն Զաքարեանի շիրիմներուն վրայ: Սկսուածները տարածուեցան բոլոր շիրիմներուն շուրջ եւ իւրաքանչիւրը մեխակ մը գետեղեց նահատակի մը շիրիմին:

Այնուհետեւ, մասնակիցները ուղղուեցան Ծիծեռնակաբերդ, ուր Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան առաջնորդութեամբ, իբրեւ «Կամաւոր բանակ» անոնք սողանցեցին դէպի անմար կրակ: Կեդրոնական Վարչութիւնը ծաղկեպսակ մը գետեղեց Եղեռնի զոհերու յիշա-





տակին, իսկ մասնակիցները մէկական ծաղիկ զետեղեցին անմար կրակին շուրջ: Յուշահամալիրին մէջ խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեան: Ան նշեց կապը Եռաբլուրի մէջ հանգչած նահատակներուն եւ Եղեռնի նահատակներուն: Եղբայրը յայտնեց, որ երկու վայրերն ալ բոլորին հոգինե-

րուն մէջ յուզումի զգացումներ կ'արթնցնեն: Երկու վայրերը սրբազան հաղորդավայրեր են, որոնցմով պարտաւոր ենք հաղորդուելու:

Եղբ. Տէր Պետրոսեան իր խօսքին մէջ ըսաւ, որ մէկուկէս միլիոն նահատակները անգամ մը եւս ջարդած կ'ըլլանք եթէ երբեք կորսնցնենք մեր լեզուն ու մշակոյթը, պատմութիւնն ու հաւատքը:

Ապա, ան խնդրեց որ երկու վայրկեան լուսթեամբ ներկաները հաղորդուին նահատակներու շունչով (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 37):

Խօսքէն ետք, սկսուաներ Միծեռնակաբերդին հրաժեշտ տուին «Յառաջ նահատակ» քայլերգով:

**Maison Mere**  
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt  
Tel: (202) 3913296 - 3918542  
Fax: (202) 3903899

**Ramses Hilton**  
Tel: (202) 5758000 - 5744400  
Direct: (202) 5751790

**Zamalek**  
11 Hassan Sabry st., Degla center  
Tel: (202) 3322121 - 3322130  
Fax: (202) 3322130



# VARTAN KAZANDJIAN



# KAZANDJIAN

E-mail: [vartan@intouch.com](mailto:vartan@intouch.com)      **Joillier-Orfevre Fonde en 1920**

Շրջապտոյակները կարևոր փեղ ունին համա-  
Հ.Մ.Բ.Մ.ական բանա-  
կումներու յայտագիրնե-  
րուն մէջ, որովհետեւ  
անոնք բանակողներուն  
կը փոխանցեն հայրե-  
նիքի սէրն ու ճանաչո-  
ղութիւնը, հայրենիքին  
մէկ մասնիկը ըլլալու  
գիրակցութիւնը եւ,  
հետեւաբար, հայօ-  
րէն զգալու, ապրելու  
եւ գործելու պատ-  
գամը:

Համա-Հ.Մ.Բ.-  
Մ.ական ծրագրի բանակումը,  
նախորդներուն նման, հարուստ եղաւ  
շրջապտոյակներով: 650 բանակողներ, փասնեակ մը  
օրոքարներով, խանդավառ փրամադրութիւններով  
այցելեցին Գառնի, Գեղարդ եւ Սեւանայ լիճ: Տեղի ու-  
նեցաւ նաեւ Խոր Վիրապ եւ Էջմիածին այցելութիւն,  
որուն բնոյթը սակայն փարբեր եղաւ:



# ԳԱՌՆԻ, ԳԵՂԱՐԴ, ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՕՐԷՆ ԶԳԱՈՒԷ, ԱՊՐԵԼՈՒԷ ԵՒ ԳՈՐԾԵԼՈՒԷ ՊԱՏԳԱՄԸ ԿԸ ՓՈԽԱՆՑԵՆ ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒՆ


## ԳԱՌՆԻ-ԳԵՂԱՐԴ

**Գ**առնին, իբրեւ հեթանոսական միակ կան-  
գուն տաճար, մեծ հետաքրքրութիւն ստեղ-  
ծեց իր այցելուներուն մօտ: Շատեր իրենց  
յիշողութիւններով վերագործան դպրոցական գրասե-  
ղաններու ետին, վերջիջելով Արշակունի հեթանոս թա-  
գաւորները, որոնց անխօս փառքը կ'ոգեկոչէ Ն.Ք. Ա.  
դարուն շինուած այս կոթողը:

Պատմահայր Խորենացիի համաձայն, Գառնին կա-  
ռուցած է Հայկ նահապետի ծոռը՝ Գեղամը, որ զայն  
կոչած է իր թոռան՝ Գառնիկի անունով: Պեղումներէն  
սակայն ի յայտ եկած է, որ տաճարը կառուցուած է  
Ն.Ք. 77 թուականին եւ երկար տարիներ ծառայած է  
իբրեւ Արշակունի թագաւորներու «անառիկ ամրոց»  
եւ գօրակայան: Շրջան մը ան եղած է Տրդատ Գ. թա-  
գաւորի քրոջ՝ Խոսրովիլուկատի ամարանոցը:

Բանակողները պատմական այս արժէքաւոր տեղե-  
կութիւններուն ծանօթանալէ ետք, առիթը չփախցու-  
ցին նկարուելու անոր հեթանոսական երբեմնի բազի-  
լին շուրջ: Ապա, պատուիրակութիւն առ պատուիրա-  
կութիւն անոնք յիշատակի նկարներ նկարուեցան տա-  
ճարին շքամուտքին առջեւ:

Գառնիէն ետք, Գեղարդ այցելութիւնը եղաւ բաւա-  
կան հաճելի: Գեղարդի մուտքին, բանակողները դիմա-  
ւորուեցան աւանդական տաւուր-գոլուճայով: Շուտով  
կազմուեցաւ շուրջպարի օղակը եւ բոլորը մէկ մարդու  
նման Գեղարդի շրջափակը թնդացուցին իրենց ոտքե-  
րուն տակ: Երգերու եւ պարերու շարքը երկարեցաւ  
աւելի քան կէս ժամ, մինչեւ որ հնչեց պատասխանա-  
տու խմբապետին կոչնակը՝ համախմբուելու եւ վան-  
քին այցելութեան պատրաստուելու:





Հինգ վայրկեան ետք, սկսուտներ արդէն վանքին ժայռափոր գաւիթին մէջ մոմ կը վառէին եւ «օրհնեալ ջուր»ին մէջ դրամ կը ձգէին՝ իրենց մուրազներուն իրականացումը խնդրելով:

Գեղարդի հիասքանչ վանքին ծանօթացումը տեւեց աւելի քան մէկ ժամ: Վանքը այցելողները առանձնաբար ծանօթացան Ս. Աստուածածին եկեղեցիին (ժԳ. դար), անոր արեւմուտքը գտնուող վիմափոր այլ եկեղեցիի մը (ժԳ. դար), Պռոշեան իշխաններու դամբարաններուն, վիմափոր մատուռին (ժԲ. դար), ժայռափոր խուցերուն եւ գեղաքանդակ խաչերուն:

Ապա, քրտնած ու յոգնած բանակողները հաւաքեցան մօտակայ Ազատ գետին ափը, կէսօրուան իրենց ճաշը ուտելու եւ ջրախաղերով պահ մը զովանալու համար:

### ՄԵԻՄՆԱՅ ԼԻՃ

Սեւանայ լիճ այցելութիւնը բանակողներուն պարգեւեց հաճելի եւ օգտակար օր մը: Շատերը առաջին անգամ ըլլալով առիթը ունեցան տեսնելու «բարձրիկ ծովերու արքան»: Հետաքրքրութեամբ բարձրացան Սեւանի թերակղզին, մօտէն ծանօթացան Ս. Առաքելոյ եւ Ս. Աստուածածին եկեղեցիներուն: Այցելեցին Սեւանի հոգեւոր ձեմարանը, ապա






յիշատակելի փամեր անցուցին լճափը, եր-  
գերով, պարերով, խաղալով ու լողալով:  
Սեւանը, ուր «երկինքը իր ճիշդ

պատճէնն է հանում», բանակողները  
հմայեց ոչ միայն իր ջուրով, օդով եւ ցա-  
մաքով, այլեւ՝ ... ձուկով: Սեւանի հա-

մեղ ձուկը փառաւոր ճաշ մը եղաւ բա-  
նակողներուն, որոնք դեռ երկա՛ր պիտի  
փնտռեն զայն:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home,  
away from home...*

**Reservations** **Yerevan**  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am


[www.europehotel.am](http://www.europehotel.am)



# ԱԶԳԱՅԻՆ-ԴԱՐԱՒՈՐ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

**ԷԶՄԻԱԾԻՆ ԵՒ ԽՈՐ ՎԻՐԱՊ  
ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՁՆՁԵԼԻ  
ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՓՈԽԱՆՅԵՆ  
ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒՆ**

*Հայ հաւաքքի եւ ինքնութեան  
ուխարավայրեր եւ  
Էջմիածինն ու Խոր Վիրապը,  
որոնք դարերու  
պարմութիւն, աւանդութիւն  
եւ արժէք ունին: Հ.Մ.Մ.ական  
փարբեր սերունդներու երազը  
եղած է հոն այցելել:  
Սկառուարական շարքեր  
առանց փեսնելոյ ու  
ճանչնալոյ սիրած եւ զանոնք  
պարմութեան դասագիրքերու,  
պատի քերթերու եւ  
դասախօսութիւններու  
ճամբով:*







**Ն**շանակալից պիտի ըլլար էջմիածին եւ խոր Վերապ այցելութիւնը: Այդպէս ալ եղաւ: Կիրակի, 6 Օգոստոսին, բանակողները այցելեցին պատմական Վաղարշապատ քաղաքը՝ էջմիածին: Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկրէն բացակայութեան պատճառով, զանոնք ընդունեցին Փառէն Եպս. Աւետիքեան եւ Տաթեւ Արք. Սարգիսեան:

Բոլորը, շուրջ 650 տարագաւորներ, հաւաքուեցան վեհարանին դահլիճը, ուր տեղի ունեցաւ ծանօթացման հանդիպում: Ներկաներուն Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին ողջոյնները

փոխանցեց Փառէն Եպս. Աւետիքեան: Յանուն կաթողիկոսին, ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ըսաւ, թէ Ամենայն Հայոցը վատահաբար ցնծութեամբ պիտի խայտար, տեսնելով նման մեծաթիւ պատուիրակութիւն մը էջմիածնի մէջ: Չեմ կարծեր, որ պատմութեան ընթացքին էջմիածինը այսօր մեծաթիւ պատուիրակութիւն մը իր յարկին տակ հիւրընկալած ըլլայ, չեչտեց ան:

Աւետիքեան Սրբազանը իր խօսքին մէջ նշեց, թէ ինք հետեւած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումի աշխատանքներուն եւ յոյս յայտնեց, որ բոլորը աւելի հայացած կը վերադառնան

իրենց երկիրները: «Թիւր ոչինչ կը նշանակէ, կարելորդ ոգին է: Ես կեանքի մէջ որեւէ ժամանակ սկաուտ չեմ եղած, բայց գիտեմ կարգ մը կարգախօսեր որ ունիք: «Բարձրացի ր-բարձրացուր»ը ձեր նշանաբանն է: Դուք կը բարձրանաք, որպէսզի ձեր շրջապատը բարձրացնէք: Քրիստոսի խօսքով դուք թթխմորն էք, որ կը դրուի ալիւրի մէջ, որպէսզի խմորէ ամբողջը», ըսաւ ան:

Շարունակելով, Սրբազանը մաղթեց, որ բանակողներուն համար Հայաստանը այսուհետեւ պատմական յիշողութիւն մը չըլլայ, այլ՝ մաս կազմէ անոնց առօրեային եւ հետաքրքրութիւններուն: Բոլորին հոգիները այս-





# ԲԱՆԱԿՈՒՄ 06

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Գառնիկ Մկրտիչեան  
Կարպիս Գապասագայեան  
Պատրիկ Կիւլպէնկեան  
Յարութիւն Յարութիւնեան  
Գէորգ Կարապետեան

ԲԱՆԱԿՈՒՄԻ ԳՈՐԾԱԳԻՐ  
ՄԱՐՄԻՆ

Ալէք Խաչատրեան  
(Ընդհ. խմբապետ)

Հրաչ Շմաւոնեան  
(Փոխ խմբապետ)  
Լուսին Գալչեկեան  
(Փոխ խմբապետուհի)  
Օշին Փիրումեան  
(Ընդհ. հերթապահ)  
Իրմա Ճէրէճեան  
(Քարտուղարութիւն)  
Գօգօ Մկրեան  
Յարութ Նասոյեան  
Մանուկ Քէօշկէրեան  
Տիրան Շահինեան  
Ռուպան Թամրապեան

ԲԱՆԱԿՈՒՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Վերա Բարսեղեան  
(Կ. Վարչութեան գործավար)  
Յարութիւն Վարդանեան  
(Լուսանկարիչ)  
Չառա Այունս (Բժիշկ)  
Գաւիթ Գվրբեան (Խոհարար)  
Համեստ Մանգուշեան (Խոհարար)  
Անի Մահսէրէճեան (Խոհարար)

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.  
Լիլիթ Վարդանեան  
Վարդան Միրումեան  
Արեւիկ Գրիգորեան  
Շուշան Մելիքեան  
Վարդուհի Պուշխիւսեան




տեղ ըլլան, բոլորին մտասեւեռումը Հա-  
յաստանի՝ վրայ կեդրոնացած ըլլայ:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնա-  
կան Վարչութեան անունով խօսք առաւ  
եղբ. Կարպիս Գապասագայեան: Ան  
ըսաւ, որ դահլիճին մէջ գտնուողները  
կը ներկայացնեն Սփիւռքի Հ.Մ.-  
Ը.Մ.ականներուն ներկայացուցչական  
պատկերը: Եղբ. Գապասագայեան Հ.Մ.-  
Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ  
սկառուական կազմերուն անունով  
շնորհակալութիւն յայտնեց ընծայուած  
ընդունելութեան համար եւ հաստատեց,  
որ իւրաքանչիւր սկառու այս ուխտա-  
վարէն պիտի մեկնի իրեն հետ տանելով

էջմիածնի ոգին, շունչն ու հաւատքը:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնա-  
կան Վարչութեան ատենապետ եղբ.  
Գառնիկ Մկրտիչեան Փառէն Սրբազա-  
նին միջոցով յուշանուէր մը փոխանցեց  
Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Յու-  
շանուէրներ փոխանցեցին նաեւ պատ-  
ուիրակութիւններու ներկայացուցիչնե-  
րը: Բանակումի ընդհանուր խմբապետ  
եղբ. Ալէք Սաչատրեան, իր կարգին, բա-  
նակողներուն անունով յուշանուէր մը  
փոխանցեց Տաթև Արք. Սարգիսեանին:

Այցելութեան պաշտօնական բաժնին  
աւարտին, բանակողները այցելեցին  
էջմիածնի թանգարանը, ծանօթացան





# ԲԱՆԱԿՈՒՄ 06 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Խորէն Նապարեան  
Գէորգ Չիարեան  
Հայկ Գալստեան  
Տիգրան Սարգսեան  
Կարէն Տէրտէրեան  
Արթուր Ղասապեան  
Վարդան Եսայեան  
Օֆելիա Յարութիւնեան  
Տարօն ճշոյեան  
Լոր Աղաբէկեան  
Արսէն Յունանեան  
Արթուր Յակոբեան

## ԱԽՍՏՐԱԽԱ

Վանուհի Նապարեան  
Թամար Օհաննէսեան  
Թամար Մարգարեան  
Արաքս Նապարեան  
Ռէյմոնտ Պողոսեան  
Մարալ Օհաննէսեան  
Արա Օհաննէսեան

## ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

Պերճ Ճամճեան  
Ալէն Ֆեխալի  
Քրիսթին Ֆեխալի  
Սեւան Գալստեան  
Նարայի Քիրոսոյեան  
Սեւակ Մալախեան  
Շանթ Օհաննէս  
Արմինէ Սարաֆեան  
Արշակ Սարաֆեան  
Սարին Յնծայեան  
Նիրվանա Պալեան  
Մարտիրոս Էքմէքճեան  
Գրիգոր Յարութիւնեան  
Նարեկ Գլրճեան  
Վաչէ Թաթարեան  
Անայիս Ղարաբէգեան  
Բաֆֆի Գարակէօզեան  
Ժանօ Մարտիրոսեան  
Թալին Մարտիրոսեան



ազգային ու հոգեւոր արժէքներու, նաեւ՝ բացառիկ արտօնութեամբ առիթը ունեցան տեսնելու թանգարանին հոյակապ գոհարներէն՝ ոսկեգօծ այբուբենը եւ ոսկեայ նրբաշխատ խաչը:

## ԽՈՐ ՎԻՐԱՊՆ ՈՒ ԱՐԱՐԱՏԸ ԿԸ ՀՄԱՅԵՆ

Խոր Վիրապ այցելութիւնը տեղի ունեցաւ յաջորդ օր՝ Երկուշաբթի, 7 Օգոստոսին: Նախքան Խոր Վիրապ հասնիլը, բանակողները արդէն տողորուած էին ազգային-հայրենասիրական ջերմ զգացումներով, ամբողջ ճամբու երկայնքին դիտելով վեհապանծ Արարատը, իրենց

մեծ երազը, որուն հասնելու տենչը կը մնայ գլխաւոր երաշխիքը հայ ըլլալու եւ հայ մնալու:

Խոր Վիրապի մէջ, բանակողները այցելեցին տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցին, տեսան գետնափոր այն նկուղը, ուր Գրիգոր Լուսաւորիչ անցուցած է իր տառապալից 13 տարիները: Մաքուած է: Սրբացած է: Դիմացած է ամէն ձեւի գրկանքի ու տանջանքի, ի վերջոյ Լուսաւորիչի իր սրբութեամբ քրիստոնէութիւնը Հայաստանի պետական կրօն հռչակել տալու համար:



Եկեղեցւոյ չրջափակին մէջ, բանակողներուն ուղղուած խօսքով մը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագարեան ներկայացուց Գրիգոր Լուսաւորիչի եւ քրիստոնէութեան դարձի պատմութիւնը: Ան արժեւորումը կատարեց քրիստոնէութեան պետական կրօն հռչակման քայլին եւ բոլորը հրաւիրեց հաւատարիմ մնալու հայ հաւատքին, արժէքներուն եւ ազգային նկարագրին:

Այցելութեան ընթացքին, բանակողները մօտէն տեսան Արարատը, փշաթելելով իր հարազատներէն գրկուած վիճակով: Այդ օր բոլորը յուզուեցան: Միտքեր ու հոգիներ ալեկոծումներ ունեցան, իսկ ամէնէն ուշագրաւը եղաւ պատկերը Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտի մը, որ ծնրադիր, արտասուելից աչքերը ուղղած Արարատին, կամքով ու հաւատքով լեցուն, կրկնեց ու կրկնեց՝

«Արարատը մե՛րն է,  
Արարատը մե՛րն է»:



# Հ.Մ.Ը.Մ. ԿԸ ՎԵՐԱՆՈՐՈՒԳԷ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ ԱՐԺԱՆԻ ԴԱՌՆԱԼՈՒ ԻՐ ՈՒԽՏԸ ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԿՊԳԵՒՈՐԷ ԲԱՆԱԿՈՂՆԵՐԸ



Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար գնդ. Արթուր Աղաբէկեան:


*Ո՞վ չի գիտեր «Սարդարապատ» յաղթերգը: Ո՞վ ծանօթ չէ Սարդարապատի հերոսամարտը ներկայացնող պարմութեան դասին: Հապա՞ «Սրբազան քաջերը» եւ զանոնք յանրժացնող «արդար պայտը»:*

*Սարդարապատը, 1918ի հերոսամարտին նշանաւոր այգի-յուշարչանը, քարտէսին վրայ հազիւ կէտ մըն է, սակայն Հ.Մ.Ը.Մ.ական մարդուն համար ան խորհրդանիշ մըն է: Փոքր տարիքէն սկստուրը կ'ուխարէ «հոգու պարտքը» տալ, որովհետեւ «Սարդարապատում ամէն բան նորից սկսուեց, երբ ամէն ինչ պիտի վերջանար այնտեղ» (Պ. Մեւակ):*

**Ս**արդարապատ այցելութիւնը տեղի ունեցաւ բանակումին նախափերջին օրը, 8 Օգոստոս 2006ին: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան բազմանդամ պատուիրակութեան մը առաջնորդութեամբ, բանակողները Սարդարապատ հասնելով, կարգապահ շարքերով տողանցեցին մինչեւ յուշահամալիր, ուր անոնք դիմաւորւեցան Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար գնդ. Արթուր Աղաբէկեանի եւ Արմաւիրի մարզպետ Ալպէրթ Հերոյեանի ներկայացուցիչին կողմէ:

Սարդարապատի յուշակոթող-պատին տակ կատարուեցաւ տպաւորիչ հանդիսութիւն: Ներկաները երգեցին «Մեր Հայրենիք» քայլերգը: Ապա, ընթերցուեցաւ Արմաւիրի մարզպետին ողջոյնի խօսքը: Խօսքին մէջ, մարզպետ Հերոյեան դիտել կու տար, թէ պատահական չէ «Միշտ պատրաստ» հայրենիքի համար» նշանաբանը: Առաջին անգամ ան հնչած է մեր նախնիներու շրթներէն: «Միշտ պատրաստ» ըլլալու երդումը

կը գտնուի իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի հոգիին խորքը: Հետեւաբար, «Աշխարհի որ ծայրն ալ գտնուիք՝ հաւատարիմ մնացէք ձեր կոչումին եւ բարձր պահե-



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ կը հետեւին հանդիսութեան:



ցեք ձեր ազգային արժանապատ-  
ուութիւնը», կ'ըհէր խօսքը:

*Մարզպետ Հերոյեան իր խօսքը կը փա-  
կէր շեշտերով, թէ «Մենք կը վստահինք  
ձեզի: Մենք կը հաւատանք հայ երիտա-  
սարդութեան, որուն ձեռքին կը գտնուի  
մեր վաղուան օրը, մեր պետականու-  
թեան հզօրացումն ու ապագան»:*

*Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական  
Վարչութեան խօսքը փո-  
խանցեց եղբ. Յարու-  
թիւն Յարութիւն-  
եան: Ան ըսաւ, որ  
այս բանակումը  
միայն բանա-*

*կում չէր, այլ ուխտագնացութիւն էր  
դէպի հերոսական անցեալ:*

«Սարդարապատը մեր երազներու  
իրականացման սկիզբն էր միայն,-  
յայտնեց եղբ. Յարութիւնեան,- 20րդ  
դարու սկիզբը Սարդարապատով հիմ  
դրուեցաւ Ազատ, Անկախ, Միացեալ

Հայաստանի տեսլականին: Այդ  
տեսլականով առաջնորդը-  
լած, սերունդները  
իրենց յաղթական  
երբը շարունակե-  
ցին մինչեւ Ար-  
ցախ ու դեռ պի-  
տի շարունա-  
կեն մինչեւ մեր  
նպատակներու  
իրականացու-  
մը՝ Ազատ, Ան-  
կախ եւ Միաց-  
եալ Հայաստանի  
կերտումը» (խօս-  
քին ամբողջութիւնը  
տեսնել էջ 35):

*Ողջոյնի խօսք արտասա-  
նեց նաեւ Հայաստանի պաշտպանու-  
թեան փոխ նախարարը: Գնդ. Աղաբէկ-  
եան գլուգահեռներ գծեց Հ.Մ.Ը.Մ-ի եւ  
պաշտպանութեան նախարարութեան  
պահեստի գօրքին միջեւ: «Դուք կը նմա-  
նիք մեր պահեստի գօրքին եւ, ինչու  
չէ, անոր կրկնութիւնն էք,- ընդգծեց  
ան,- մենք կը հպարտանանք ձեզմով,  
որովհետեւ դուք աշխարհի տարածքին  
սփռուած ըլլալով, ձեր հաւաքատեղին*



# ԲԱՆԱԿՈՒՄ

# 06

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

*Ռիթա Եմէնիճեան  
Գառնի Արմէնեան  
Ժագ Գասամանեան  
Արտա Մահսէրէճեան  
Վանայ Մահսէրէճեան  
Մոնիքա Սարուխանով  
Ռիչըրտ Սարուխանով  
Դանիա Սարուխանով  
Գենի Գասպարեան  
Տիգրան Ունճեան  
Օհաննէս Արիստակէսեան  
Յովիկ Ալատիսանեան  
Սեմա Չապօ  
Մարտիկ Չաքալեան  
Թամար Հանուն  
Քարէրինա Քարսանթ  
Գարինա Գուլումճի  
Վերա Միճեան  
Քարթա Նապարեան  
Ռուպերթ Սարգիս  
Շանթ Սիահեան  
Սեւակ Չանչանեան  
Սարենիկ Յարութիւնեան  
Լոռի Ենիգոմշեան  
Սեւան Ենիգոմշեան  
Անիթա Քումրիկեան  
Ալին Միքայէլեան  
Նայիրի Միքայէլեան  
Ռամին Ռանչպար  
Ռայա Ռանչպար  
Անժելա Սողոյեան  
Կրէկ Սողոյեան  
Գենկօ Սողոյեան  
Գէորգ Արթինեան  
Գրիգոր Արթինեան  
Շահան Պողիկեան  
Արի Պոյաճեան  
Նանօր Տէյրմէնճեան  
Թամար Յունունովեան  
Յովիկ Յարութիւնեան  
Շանթ Հաւանճեան  
Անդրէաս Հինտոյեան  
Մարալ Հինտոյեան  
Նաթալին Հինտոյեան*



Երթ՝ դէպի  
յուշահամալիր:

Արմատիրի  
մարզպետ Ալպէրթ  
Հերոյեանի խօսքը  
կը փոխանցէ իր  
ներկայացուցիչը:

կը նկատէք Հայաստանը»:

*Շարունակելով, փոխ նախարարը  
ըսաւ. «Դուք պատրաստ էք յանուն  
հայրենիքի գործելու: Անհրաժեշտու-  
թեան պարագային, դուք ոչ թէ թիկուն-  
քի, այլ առաջին գիծի վրայ կ'ըլլաք:  
Ողջո՛յն ձեզի, Հայաստանի Հանրապե-*

*տութեան զինուած ուժերուն անունով»:*


*Հանդիսութեան պաշտօնական բա-  
ժինը վերջ գտաւ «Յառաջ նահատակ»  
քայլերգով: Այնուհետեւ, բանակումին  
մասնակից պատուիրակութիւնները  
ներկայացուցին զեղարուեստական ճոխ  
յայտագիր՝ երգ ու պար:*

**ԲԱՆԱԿՈՒՄ**  
**06**  
**ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ**

*Մարքըս Գալպպեան  
Նարեկ Գալպպեան  
Արմանտ Գամպուրեան  
Աւօ Գամպուրեան  
Գարինա Խանձեան  
Ժուլիանա Խանձեան  
Արամ Մանուկեան  
Գրիգոր Մանուկեան  
Նարեկ Մեծաչեան  
Սարին Փափապեան  
Յարութ Փեղիվանեան  
Սարին Դաւիթեան*

**ARMENIA**  
*for private and group trips*  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

**Saberatours  
Sevan Voyages**

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**  
Արմավիա

Photos: © Yarm Arnhue-Bertrand / Ag. Terre vue du Ciel. Licence 075 960031. **StudioVCCEN** 2007-2008

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# ԲԱՆԱԿՈՒՄԸ ԾԱՆՕԹԱՑՆՈՂ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

**Բ**անակումի բացման նախօրեակին, Երկուշաբթի, 31 Յուլիս 2006ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ ծանօթացման մամուլային ասուլիս մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, ատենադպիր եւ սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասազալեան, համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Ալէք Սաչատրեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան: Ասուլիսին ներկայ գտնուեցան Հայաստանի մամուլ եւ պատկերասփիւռի կայաններու ներկայացուցիչները:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ շնորհակալութիւն յայտնեց իրենց ներկայութեան համար: Ան նշեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումին առիթով հայրենիքի մէջ համախմբուած են Սփիւռքի գանազան շրջաններէն Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտներ, որոնք հայրենի իրենց քոյր-եղբայրներուն միանալով պիտի անցընեն անմուսնալի օրեր: Ապա, եղբայրը արագ ակնարկ մը նետեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան եւ պատմականին վրայ՝ նշելով, որ ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհի չորս ծագերուն ունի 98 մասնաճիւղեր: Միութիւնը

կը գործէ մարզական եւ սկաուտական թեւերով, «Մարզիկ» պաշտօնաթերթով:

Յաջորդեց եղբ. Կարպիս Գապասազալեանի խօսքը: Եղբայրը պատմականը կատարեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական նախորդ բանակումներուն, նշելով, որ Հայաստանի վերանկախացումէն առաջ, անկարելի էր երեւակայել, որ օրին մէկը անկախ Հայաստան մը ունենալէ ետք, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում կարելի է կատարել Հայաստանէն դուրս: Եղբ. Գապասազալեան յայտնեց, որ հայրենիքէն դուրս կատարուած բանակումները մեծաթիւ մասնակցողներ չեն ունեցած, սակայն հայրենի հողին վրայ կազմակերուածներու մասնակիցներուն թիւը երբեմն անցած է 700ի սահմանը:

Շարունակելով, եղբայրը ըսաւ, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումին կը մասնակցին 16 երկիրներէ սկաուտներ, ինչպէս նաեւ՝ Իրանի «Արարատ», «Սիփան» եւ «Նայիրի» կազմակերպութիւններէն պատուիրակութիւններ: Քաղաքական ծանօթ պատճառներով բանակումէն կը բացակայի Լիբանանի շրջանը:

Այնուհետեւ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Ալէք Սաչատրեան փոխանցեց բանակումին նպատակը եւ յայտագիրը: Ան յայտնեց, որ բանակումին նպատակը հայրենիքին ծանօթանալ է, ինչ որ ապագային կրնայ ծնունդ տալ Հայաս-

տանի մէջ հաստատուելու որոշումին: Բանակումը նաեւ աշխարհի չորս կողմէն եկած Հ.Մ.Ը.Մ.ականներու իրարու ծանօթացման առիթ է, որ կ'առաջնորդէ հայ բարեկամներու ծիրի ընդարձակման:

Ասուլիսին խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան: Ան արտայայտուեցաւ բանակումին ընթացքին տեղի ունենալից հանրային ծառայութեան գործունէութեան մասին, ըսելով թէ սկաուտները պիտի օժանդակեն հայրենիքի զարգացման: Անոնք նաեւ պիտի այցելեն Ոսկրածուծի Հայկական Կեդրոնը: Եղբ. Շմաւոնեան բանակումին նշանաբանէն մեկնելով, շեշտը դրաւ հայրենիքի նկատմամբ Հ.Մ.Ը.Մ.ականներու ունեցած սիրոյ եւ կապուածութեան վրայ:

Մամուլային ասուլիսի աւարտին, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբայրը շնորհակալութիւն յայտնեց Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոպէրթ Քոչարեանին, որ միշտ քաջալերած է Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքները: Ան նաեւ շնորհակալութեան յատուկ խօսք ուղղեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանին, որ իր անվերապահ գործակցութիւնը ցուցաբերած է բանակումին աշխատանքներուն՝ օժանդակելով Հայաստան մուտքի արտօնագիրներու ապահովման:



# ԲԱՆԱԿՈՒՄ

## 06

### ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Վիգի Դաւիթեան  
 Լեւոն Թոսունեան  
 Քրիս Աբրամեան  
 Մինէ Աճէմեան  
 Մելինա Աղապարեան  
 Շարիս Ամիրեան  
 Մարալ Անթունյան  
 Ալան Բաբայեան  
 Արթին Բաղդամեան  
 Էլին Բալասանեան  
 Նայիրի Տէր Եղիշեան  
 Նարբէ Տէր Եղիշեան  
 Թալին Գալուսեան  
 Ալէն Ղարախանի  
 Անի Ղարախանի  
 Նանօր Հինտոյեան  
 Անոյշ Ղապարեան  
 Արտաշէս Ղապարեան  
 Արապ Մկրտիչեան  
 Էլենա Միրզայեան  
 Արին Օհանեան  
 Լեոնիկ Օհանեան  
 Արթինա Փիրվերդիեան  
 Թալին Ռոստամի  
 Աթենա Շահինեան  
 Արէնի Շահինեան  
 Նորայր Թահմապեան  
 Ալին Տէր Գէորգեան  
 Անտրէ Զաքարեան  
 Արա Զաքարեան  
 Անահիտ Առոյեան  
 Յովհաննէս Առոյեան  
 Սեւակ Կարապետեան  
 Սարին Մարգարեան  
 Սանան Շիրինեան  
 Ժիրայր Թաթիկեան  
 Քրիս Վարդանեան  
 Նապարէթ Ծիծաղեան  
 Նարեկ Պատարեան  
 Անահիտ Մոտրէզ  
 Նիքոլ Նալպանտեան  
 Շանթ Աբէլեան  
 Լարա Ակիլեան  
 Ժենիա Պէքերեան  
 Ռիթա-Մարի Կոստանեան



# «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ»-Ի ԻՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐՏՍՈՒՄ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները կը փոխանցեն բազմաթիւ դասեր, որոնցմէ մէկն ալ հայրենասիրութեան կապուած ըմբռնումն է: Բանակողներ Հայաստանի մէջ գտնուելով, հայրենի ժողովուրդին հետ անմիջական շփման մէջ ըլլալով, կ'անդրադառնան, թէ հայրենասիրութիւնը զգացական խօսք չէ, ֆոլքլոր չէ՝ ճաշկերոյթ-պարահանդէսներու ընթացքին պարուող անվերջանալի եւ միօրինակ շուրջպարով, ոչ ալ «ես իմ անոյշ Հայաստանի»ի ամէնօրեայ կրկնութիւնն է: Այդ բոլորը կարեւոր են, անկասկած, սակայն անբաւարար են: Հայրենասիրութիւնը իրաւ գործ է, քարը-քարին դնելու աշխատանք է, կառուցել-կերտելու ճիգ է: Այս գործին ու ճիգին փաստը տուին

համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին մասնակիցները, երբ օր մը ամբողջ յատկացուցին հանրային ծառայութեան աշխատանքին: Բանակումին հինգերորդ օրը, զանազան խումբերու բաժնուներով, անոնք ուղղուեցան Կիւմրիի զանազան գիւղերը (Կրաշէն, Հովիտի Գոգ...), ուր մաքրեցին անխնամ մնացած դարաւոր վանքերու փլատակներ, ծանօթութիւններ հաստատեցին գիւղացիներու հետ, հիւրասիրուեցան եւ բանակավայր վերադարձան իրական գործ կատարած ըլլալու գոհունակութեամբ: Բանակողներէն մաս մը այցելեց Կիւմրի քաղաք, ուր դիմաւորուեցաւ Շիրակի մարզպետին ներկայացուցիչին եւ տեղւոյն Առաջնորդին կողմէ: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Պատ-







# » ԿՐՈՒՆԵՆԱՅ ՏԱՅԱՅ ՏՈՒԹԻՒՆԸ



րիկ Կիւլպէնկեան, Սարգիս Տէր Պետրոսեան եւ Գէորգ Կարապետեան հանդիպում մը ունեցան Շիրակի Առաջնորդ Սրբազանին հետ, ներկայացնելով Հ.Մ.Ը.Մ.ը եւ հանրային ծառայութեան օրուան առաջադրած նպատակները:

Բանակողներու այլ խումբ մը ուղղւեցաւ Կիւմրիի հոգեբուժարանը, ուր հանդիպեցաւ հիւանդներու, ծանօթացաւ հոգեբուժարանի կարիքներուն եւ

տեղւոյն վրայ հանգանակութիւն մը կատարելով՝ 140 հազար դրամ նուիրեց պատասխանատուներուն:

Մեծ անակնկալ մը կը սպասէր Կրաչէն այցելող բանակողներուն, որոնք գիւղացիներուն կողմէ արժանացան ջերմ ընդունելութեան: Կրաչէնցիներ իրենց գիւղը այցելող Հ.Մ.Ը.Մ.ականները պատուեցին խաչամայով եւ թոնիրի հացով: Գիւղին մէջ անոնք մաքրեցին

խորհրդային օրերէ լքուած եւ 1988ի երկրաշարժին քանդուած եկեղեցւոյ մը փլատակները, ապա անոնք այցելեցին գիւղին ջրամբարտակը:

Ծառայութեան օրը, անկասկած, ուսանելի դաս մը փոխանցեց բանակողներուն, որովհետեւ անոնք գործնական ապացոյց մը տուին «Միշտ պատրաստ» ըլլալու Հ.Մ.Ը.Մ.ական իրենց դաստիարակութեան:

With the compliments of

# Restaurant Al-Mayass



**«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ ՏՈՂԱՆՑՈՂ  
ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ՊԱՏԳԱՄԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅԵՏՆՈՐԴ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒՆ**

# **ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՂԲԻՒՐԸ ՄԵՐ ԶՕՐՈՒԹԵԱՆ, ԵՐԱՇԽԻՔԸ ՄԵՐ ՅԱԻԵՐԺՈՒԹԵԱՆ, ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ**

*Երբք, Հ.Մ.Ը.Մ.ական սերունդներո՛ւ երբք, միշտ պատգամ մը ունի միտքեան եւ զինք ծնող ժողովուրդին: Երբք ինքնանպատակ քալումք, փողանցք մը չէ եղած ան: Բնաւ սովորական կեցուածք, արդարաւայրութիւն չէ ունեցած ան: Այլ, քարզմանը հանդիսացած է ազգային նկարագիրէ բխող եւ ազգային ինքնութիւն կերպող թելադրականութեան մը, որուն կարելի չէ չանսայ, որովհետեւ ան հարազատ արտէ կը բխի, անկեղծ հոգիէ դուրս կու գայ:*

**Ն**ման թելադրութիւն մը, պատգամ մը փոխանցեցին Երեւանի «Հանրապետութիւն» հրապարակին վրայ տողանցող համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին մասնակիցները, երբ իրենց երկիրներու դրօշներէն առաջ եւ վեր ծածանեցին պանծալի Եռագոյնը, հանուր աշխարհին հաստատելով, թէ Հայաստան





կը հանդիսանայ աղբիւրը մեր զօրութեան, երաշխիքը մեր յաւերժութեան եւ արտայայտութիւնը մեր ամբողջականութեան:

Երթը, տողանցքը տեղի ունեցաւ 6 Օգոստոս 2006ի երեկոյեան, առաջնորդութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներուն եւ բանակումի խմբապետական կազմին: Բոլորը շեփորախումբի առաջնորդութեամբ, տողանցեցին «Ազատութեան» հրապարակէն դէպի Թումանեանի փողոցը, անցան Աբովեան փողոց եւ ապա համախմբուեցան «Հանրապետութեան» հրապարակ: Տպաւորիչ էր տեսնել աշխարհի չորս ծագերէն համախմբուած բազմահարիւր սկաուտներու կշռութաւոր տողանցքը Երեւանի փողոցներուն մէջ: Անոնք իրենց քայլերուն կշռոյթով թնդացուցին Երեւանը, ազգային հպարտութեան եւ ցնծութեան տրամադրութիւններով:

Ապա, բոլորը շարուեցան հրապարակի տարածքին, Եռագոյնի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշներուն առաջնորդութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ բանակումի խմբապետական կազմին դիմաց:

Հրահանգը չուշացաւ: Օրուան հեր-

թապահ եղբ. Օշին Փիրումեանի «հանգիստ-պատրաստ»էն ետք՝ հնչեց «Մեր Հայրենիք»ը, յուզումի ալիք մը յառաջացնելով բոլորին հոգիներուն մէջ: Հրապարակը արձագանգ տուաւ Հ.Մ.Ը.Մ.ականներու քայլերգին եւ «Մեր Հայրենիք»ը այդ օր հնչեց սովորականէն աւելի բարձր ու գեղեցիկ: Յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգ «Յառաջ նահատակ»ը: Հայութեան «Կամաւոր բանակ»ը գայն երգեց առինքնող մթնոլորտի մէջ:

Տողանցքը վերջ գտաւ «դէպի յաղթանակ» ընթանալու հաստատ վճռականութեամբ:



# ԲԱՆԱԿՈՒՄ 06 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Շանթ Գուլիշեան  
Սերժ Հաւանճեան  
Լոռի Հաւաքեան  
Քնար Քահքէճեան  
Ալիք Քէրքէչեան  
Թամար Քէրքէչեան  
Դանիա Գասպարեան  
Անդրանիկ Քէնտրիճեան  
Գէորգ Խաչերեան  
Ալին Մազարտեան  
Անահիտ Մարտիրոսեան  
Անի Միհրանեան  
Նայիրի Մումճեան  
Արշամ Օհաննէս  
Սոնիկ Բարաղամեան  
Էմա Շահինեան  
Նիկոլ Շահինեան  
Քրիսչըն Թորոսեան  
Ճանաթըն Թորոսեան  
Լեւոն Եփրեմեան  
Կարինէ Աւաննէս  
Թալին Հինտոյեան  
Սագո Թաշճեան

ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ  
Թամար Սամուիշեան  
Շողեր Պարոնեան  
Ռոպ Քիլէճեան  
Մեղրի Աւագեան  
Քրիսթոֆըր Արապեան  
Վիգէն Մովսէսեան  
Դայար Քէչէճեան  
Նարայի Նաքքաշեան  
Նարայի Տուտազիեան  
Պետիկ Կալլատեան  
Յարութ Գասպարեան  
Դայար Գասպարեան  
Արա Սարդարքէլեանց  
Լարա Սարդարքէլեանց  
Գարօլ Կալլատեան  
Ալին Ալլունեան  
Աւետիս Աղկիկեան

# ԲԱՆԱԿՈՒՄ

## 06

### ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Մարիա Աղկիկեան  
 Յարուժ Տուքմաճեան  
 Սիրան Գրիգորեան  
 Խոսա Գրիգորեան  
 Անի Տիարպի  
 Կարապետ Թաշեան  
 Յարուժ Խաչատուրեան  
 Հրանդ Խաչատուրեան  
 Թալին Տարազճեան  
 Միքայել Դաւիթեան  
 Վիգէն Ռաշտանի  
 Բաֆֆի Ռաշտանի  
 Բաֆֆի Մինասեան  
 Բաֆֆի Սարգիսեան  
 Յարուժ Սարգիսեան  
 Ալիս Տօնապետեան  
 Անիթա Ճարիճեան

Թամար Ճարիճեան  
 Մարինա Փիլիպոսեան  
 Լոռի Փիլիպոսեան  
 Թամար Մաթոսեան  
 Մարի Մաթոսեան  
 Շահէ Շիքլանեան  
 Սեւան Մախուլեան  
 Քրիսթինա Տէմիրճեան  
 Շանթ Փալանճեան  
 Յարուժ Չոլճեան  
 Ալպէրթ Պարսունեան  
 Անի Պարսունեան  
 Անդրանիկ Մարտիրոս  
 Իւրէլիան Վարդան Մարտիրոս  
 Ժիրօ Իսկէնտէրեան  
 Անդրանիկ Աւետիսեան  
 Դալար Մանճիկեան  
 Լոռիկ Մանճիկեան  
 Սուէ Պօճէքեան  
 Գէորգ Ուրֆալեան  
 Արամ Գալսէրեան  
 Շանթ Քահվէճեան  
 Փաթիլ Գանթարճեան  
 Արփի Առոյեան  
 Վիգէն Քէշիշեան  
 Մասիս Խունճեան

Անիթա Գալսէրեան  
 Ալէքսանտրա Պաստաճեան  
 Քրիսթինա Պաստաճեան  
 Էլիանա Պաստաճեան  
 Սեւակ Տօնապետեան  
 Դանիա Անթունեան  
 Ալէքսանտր Անթունեան  
 Բաֆֆի Տօնապետեան  
 Բաֆֆի Եսփունճեան  
 Ճենիֆրը Պալապանեան  
 Արի Ժանէսեան  
 Լարա Տիլանճեան  
 Ալան Տիլանճեան  
 Սահակ Չաքարեան  
 Մարի Դանիէլ  
 Ճէսիքա Խոյանեան  
 Միսաք Փարլաքեան  
 Արա Իշխանեան  
 Սարգիս Տրամկոչեան  
 Կարօ Քէսէեան  
 Սմբատ Տրամկոչեան  
 Շանթ Մահաէրէճեան  
 Գէորգ Տրամկոչեան  
 Հրակ Թովմասեան  
 Յակոբ Ոսկանեան  
 Մանուէլ Իշխանեան



# Travel Ways - Egypt

## NILE CROCODILE CRUISES



*Incoming Tour Operator  
 Hotel & Cruise Reservation  
 Transportation  
 Excursions*

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1  
 from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt  
 Tel:02 2739400/500/600  
 www.travelways-egypt.com  
 marketing@twaysegy.com



## ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԷ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ ՈՒ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ ԿԱՌՉԱԾ ՄՆԱԼՈՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ բանակումը պատմութեան անցաւ 9 Օգոստոս 2006ին, երբ փակման արարողութեամբ նշուեցաւ անոր աւարտը: Հանդիսութեան ներկայ գտնուեցան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի փոխ նախագահ եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի անդամ Սպարտակ Սէյրանեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, ծնողներ եւ բարեկամներու հոծ բազմութիւն մը:

Փակման հանդիսութիւնը սկսաւ «Մեր հայրենիք» քայերգով: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ պատուիրակութիւններու ներկայացուցիչներուն միջեւ կատարուեցաւ յուշանուէրներու փոխանակում, որմէ ետք խօսք առաւ բանակումի ընդհանուր

խմբապետ եղբ. Ալէք Խաչատրեան: Ան ըսաւ, որ թէեւ կը թուի, թէ բանակումը նոր պիտի սկսի, սակայն անհասած է իր աւարտին եւ արդէն իսկ պիտի բաժնուինք իրարմէ: Եղբ. Խաչատրեան նշեց, թէ բանակումին շնորհիւ մասնակիցները առիթը ունեցան աւելի լաւ ճանչնալու Հայաստանը եւ այդ անբակտելի յարաբերութեան շնորհիւ աւելի կապուածութիւն ստեղծուեցաւ հայրենիքին հետ, ինչ որ մասնակիցները պիտի մղէ յաւելեալ այցելութիւններու եւ նոյնիսկ մնայուն կերպով հայրենիքի մէջ հաստատուելու մասին մտածելու: Այն ատեն է, որ իսկապէս կը կատարէք ձեր պարտքը հայրենիքին



Բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Ալէք Խաչատրեան



# ԲԱՆԱԿՈՒՄ 06 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Թամար Շամսասեան  
Ժիլլիէթ Ոսկանեան  
Արուսեակ Խաչատրեան  
Մարտիրոս Խաչատրեան  
Յարուօ Վարդանեան

## ԳԱՆԱՏԱ

Էրիք Արապեան  
Սեպուհ Գարայեան  
Րաֆֆի Ծառուկեան  
Լոռի Գրիգորեան  
Ռուբինա Էքմէքճեան  
Սթէֆանի Սուսամեան  
Թային Մինոյեան  
Ժիլլի Հինտոյեան  
Լեւոն Կարապետեան  
Միլվի Սուսամեան  
Վահէ Շահինեան  
Վայերի Օպէժի  
Թային Չուրիկեան  
Միրիամ Օպէժի  
Գամի Աբգարեան  
Քրիսթել Գաբրիէլեան  
Լենիա Կարապետեան  
Սօսի Սահակեան  
Արեգ Քէօհնէլեան  
Գէորգ Պոյաճեան  
Ալիք Արլումանեան  
Կասիա Կէօվպաշեան  
Նանօր Մինոյեան  
Թային Գարասէֆէրեան  
Անդրանիկ Խըշխըշեան  
Հայկ Թաճեան  
Արէն Պէլճեան  
Գրիգոր Շահինեան  
Թային Էքմէքճեան  
Ալէքս Տաղլեան  
Սեւանա Շահպալեան  
Արի Թորոսեան  
Կարօ Շանթ Թովուլեան  
Գասպար Ղապարեան  
Ահարոն Պելշեր  
Կասիա Ենիգումուշեան



Հայաստանի Ազգային Ժողովի փոխ նախագահ եւ Հ.Յ.Դ. Բիրոյի անդամ Վահան Յովհաննիսեան կը փոխանցէ իր խօսքը:

Հանդէպ, շեշտեց ան:

Շարունակելով, եղբ. Խաչատրեան յայտնեց, որ այս տարի բախտը ունինք տօնելու Հայաստանի վերանկախացման 15րդ տարեդարձը: Այս առիթով ան շնորհակարտեց բոլորը: Ապա, ան շնորհակալութիւն յայտնեց բանակումի խմբապետական կազմին, յանձնախումբերու անդամներուն, մասնակցող պատուիրակութիւններուն եւ բոլոր անոնց, որոնք Հ.Մ.Ը.Մ.ականի բարձր գիտակցութեամբ մասնակցեցան ու հետեւեցան բանակումի աշխատանքներուն եւ իրենց համագործակցութեամբ նպաստեցին անոր յաջողութեան:

Խօսք առաւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի փոխ նախագահ եւ Հ.Յ.Դ. Բիրոյի անդամ Վահան Յովհաննիսեան: Ան ողջունեց բանակումին մասնակիցները, նշելով որ Հ.Մ.Ը.Մ.ը իր կազմակերպութեամբ միշտ իւրաքանչեւ տեղ գրաւած է հայութեան կեանքին մէջ: Ան ըսաւ, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրգ բանակումը այս տարի կատարուեցաւ Արագածի լանջերուն եւ մաղթեց, որ յաջորդ բանակումը տեղի ունենայ Արարատի լանջին:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան գնահատեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական տասնօրեայ բանակումը, անոր ընթացքին իրականացած աշխատանքները, Հ.Մ.Ը.Մ.ական կարգ մը նշանաբաններու գործի վե-

րածուիլը, ինչպէս նաեւ բանակումին ունեցած դերն ու կարեւորութիւնը՝ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի համար:

Իր խօսքը բանակումին մասնակիցներուն ուղղելով, եղբ. Մկրտիչեան ըսաւ, թէ ձեր ներկայութեամբ, աշխատանքով եւ ի գործ դրած յայտագիրով անխօս բնութիւնը լեզու ստացաւ, մայր հողը շնչեց: Բանակումին փակումով անոնք կրկին ամալի պիտի դառնան, իսկ բանակողները անոնց առթած ներշնչումով պիտի վերադառնան իրենց երկիրները՝ Հ.Մ.Ը.Մ.ի հովանիին տակ իբրեւ մէկ ընտանիք տասը օր ապրելէ ետք: «Վստահ եմք, որ ձեզի հետ պիտի տանիք բուռ մը հող մայր հայրենիքէն:





Դրօշակի փակման արարողութեան ետք, բանակումին դրօշակը կը յանձնուի ընդհանուր հերթապահ եղբ. Օշին Փիրումեանին:

Ձեր շրջապատը բաժնեկից պիտի դարձնէք ձեր ապրումներուն ու զգացումներուն, նաեւ՝ ձեր վկայութիւններով, ձեր բնագաւառներուն մէջ առաւել եւս պիտի զօրացնէք հայու շունչն ու ոգին եւ առյուտ հաւատարիմ պիտի մնաք մեր պայերու անժամանցելի կտակին», յայտնեց ան:

Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբայրը լուսարձակի տակ առաւ հայրենիքի մէջ հանրային ծառայութեան իրականացումը՝ անդրադառնալով այն իրողութեան, որ լիբանանեան պատերազմին պատճառով բանակումի մասնակցութեանն զրկուած լիբանանահայ Հ.Մ.Լ.Մ.ականները նոյնանման

հանրային ծառայութեան լծուած են Լիբանանի մէջ, օժանդակութեան ձեռք երկարելով անտուն մնացած գաղթական լիբանանցիներու: Ան նշեց, որ իրաքի շրջանը, Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին վերամիացումէն ետք, հակառակ երկրին մէջ տիրող անկայուն վիճակին, առաջին անգամ ըլլալով կը մասնակցի համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումի: Այս առիթով եղբայրը ողջոյնի եւ գնահատանքի խօսք ուղղեց իրանի «Արարատ», «Սիփան» եւ «Նայիրի» միութիւններուն, որոնք պատկառելի թիւով եւ օրինակելի ընթացքով մասնակցեցան բանակումին:

Եղբ. Գառնիկ Մկրտիչեան շեշտեց, որ թէեւ բանակումը իր աւարտին հասած է, բայց Հ.Մ.Լ.Մ.ի առաքելութիւնը անընդհատ կը շարունակուի ի Հայաստան եւ ի սփիւռու աշխարհի, միութեան վեհապանծ նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ին շուրջ համախմբելով ստուար շարքեր: Ան երախտագիտութեան եւ շնորհակալութեան խօսք ուղղեց Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնական Վարչութեան, բանակումի գործադիր մարմնին, խմբապետական կազմին, պատուիրակութիւնները գլխաւորող խմբապետներուն, խոհարար եւ մատակար անձնակազմներուն եւ բանակումին բարոյապէս ու նիւթապէս նեցուկ կանգնած բոլոր անձերուն:

Իր խօսքը եզրափակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ թէեւ «Ցտեսութիւն» երգը պիտի հնչէ, սակայն



# ԲԱՆԱԿՈՒՄ

## 06

### ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

- Մեյանի Չենպեան
- Թենի Արգարեան
- Թարա Եկոյեան
- Վազգէն Ոսկեան
- Տաւիտ Տիւրանչեան
- Ժոզէֆ Շատարեւեան
- Նորա Թոփալեան
- Դայար Շահինեան
- Լեւոն Արապեան
- Լիսա Արապեան
- Արի Պետերեան
- Անտրու Պելշեր
- Քասանտրա Բանիկեան
- Մկո Արաժիլ
- Նաթալի Պերէճիքլեան
- Խաժակ Հալլաճեան
- Տարէն Եկոյեան
- Սիմոն Արապեան
- Քրիս Աթալլա
- Սարօ Տարրա
- Յասմիկ Շահինեան
- Շահէ Ծառուկեան
- Ժոզէֆ Սարաֆեան
- Էլիպայէթ Պալեան
- Հայկ Չաքարեան
- Թամար Հարմանտեան
- Մարիա Վարդանեան
- Սեդա Պոյաճեան
- Վաչէ Նաճարեան
- Թամար Տէմիրճի
- Սարին Քէօսէեան
- Սարին Միլտունեան
- Թամար Պօղոսեան
- Արա Պոյաճեան
- Խաժակ Աւագեան
- Թամար Ասաելեան
- Չոհակ Ալլահեարեան
- Թալին Մապեան
- Գարօյին Ներսէս
- Վարդան Քարկոցեան
- Անդրանիկ Տէր Պետրոսեան
- Սելին Միրզայեան
- Արէն Միրզայեան



Փակման հանդիսության կը հետևի Ն.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության անդամ եղբայրներ Վահրամ Դանիելյան, Մանուել Մարսելյան, Արրահամ Ահարոնյան, Սարգիս Տեր Պետրոսյան, Հրաչ Տեր Սարգիսյան, Յարութիւն Յարութիւնյան, Մհեր Դաւիթեան, Գեորգ Կարապետեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ Կարպիս Գապասագալեան:

նի անդամ եղբ. Յարութ Յարութիւնյանին, Ն.Մ.Ը.Մ.ի դրօշը՝ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին, իսկ բանակումին դրօշը՝ Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեանին: Վերջինը, իբրեւ յիշատակ, զայն յանձնեց բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Ալէք Խաչատրեանին:

Ն.Մ.Ը.Մ.ի աննկուն շղթան պիտի շարունակէ միացնել բոլոր Ն.Մ.Ը.Մ.ականները:

նակումին փակման աւարտը նշելով: Եռագոյնը, Ն.Մ.Ը.Մ.ի եւ բանակումի դրօշը յանձնուեցան բանակումի հերթապահ եղբ. Օշին Փիրումեանին, որ իր կարգին Եռագոյնը յանձնեց Ն.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Հայաստա-

Այնուհետեւ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն եւ դրօշակները վերջին անգամ ըլլալով վար առնուեցան՝ բա-

Փակման հանդիսութիւնը իր աւարտին հասաւ Նարեկ Քհնյ. Իշխանեանի «Պահպանիչ»ով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

**BDF** ••••


**SUD S.A.L** AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10





Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության պատգամը կը փոխանցել աստեճապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

# ՀԱՒԱՏԱՐԻՄ ՄԵՐ ՊԱՊԵՐՈՒ ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ԿՏԱԿԻՆ

**(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՓԱԿՄԱՆ ԽՕՍԲԸ՝ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՏՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ)**

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,  
Տասը օրեր առաջ ոտք դրիք Արագածի լանջերուն փռուած այս հողատարածքին վրայ, ուր բնութիւնը իր գեղեցկութեամբ անխօս էր, սակայն դուք անոր տուիք լեզու եւ յաւելեալ երանգ: Վաղը, այս վայրը կրկին պիտի ամայանայ, այնպէս ինչպէս սլացիկ բարտիէն արագիլներ, ձգելով իրենց մայր բոյնը, պարտաւորուած իրենց ճակատագրին, պիտի գաղթեն օտար աշխարհներ ու մայր բարտին իր մշտադալար տերեւներով պիտի հովէ բնութիւնը:

Տասը օրերու ընթացքին առիթը ունեցանք իրարու ծանօթանալու, գիրար ճանչնալու եւ իբրեւ արենակիցներ եղբայրացաք, գիտակցօրէն անդադառնալով որ մեզմէ իւրաքանչիւրը կը պատկանի մեծ ընտանիքի մը, որ մեզ բոլորս համատեղած է իր վսեմ գաղափարախօսութեան ներքեւ:

Տասը օրերու ընթացքին դուք այցելեցիք պատմական եւ ոգեշունչ վայրեր, հաղորդակից դարձաք մեր անցեալի ան-

հերքելի պատմութեան: Ձեր աչքերով տեսաք ու ձեր ձեռքերով շօշափեցիք իւրեւս ձեզի համար դասագիրքերու կամ պատմագիրքերու մէջ գրութիւններ չեն, այլ՝ խօսող ու մշտնջենական ապրող էութիւն են:

Անկասկած, որ այս բոլոր վայրերը ձեր մէջ դրոշմներ ձգեցին եւ դուք մեծ հոգեփոխութեամբ, լիցքաւորուած պիտի վերադառնաք ձեր երկիրները:

Վստահ ենք, որ ձեզի հետ պիտի տանիք բուռ մը հող մայր հայրենիքէն: Ձեր շրջապատը բաժնեկիցը պիտի դարձնէք ձեր ապրումներուն ու զգացումներուն, նաեւ՝ ձեր վկայութիւններով, ձեր բնագաւառներուն մէջ առաւել եւս պիտի զօրացնէք հայու շունչն ու ոգին եւ առյաւէտ հաւատարիմ պիտի մնաք մեր պապերու անժամանցելի կտակին:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,  
Սկառուտական նշանաբանին եւ դաւանանքին թելադրութեամբ, դուք քանի մը օր առաջ Կիւմրիի մէջ հանրային



# ԲԱՆԱԿՈՒՄ 06 ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ

Արման Նաճարեան  
Քաթիա Տէր Յովակիմեան  
Արմէն Նապարեան  
Գարին Սիմոնեան  
Նարինէ-Գեղարդ Գասապեան  
Ալինա Հայկ  
Նարպէի Ռոնէ Էճիու  
Աննա Պետրոսեան  
Ռինա Խեարուֆ  
Նայիրի Թիլիմեան  
Նայիրի Սարաֆեան  
Շարիս Գայումէճեան  
Թամարա Չաքարեան  
Գայար Պալեոյեան  
Ռուբինա Սարգիսեան  
Ալին Քարկոցեան  
Նայիրի-Լոռի Միլտունեան  
Կարին Խանամիրեան  
Նարէ Գալստեան  
Գարան Պետրոսեան  
Անոյշ Ղորղորեան  
Վարագ Խաչատուրեան  
Բաֆֆի Պոյաճեան

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ  
Գարօյիմա Խաչատուրեան  
Մարթին Տէկիրմէնճի  
Նիքոլա Տէկիրմէնճի  
Լուչիանա Տէկիրմէնճի  
Մելինէ Այվապեան  
Գաբրիէլ Կոստանեան  
Կասթոն Յովհաննէսեան  
Ալեխանտրո Խաչատուրեան  
Պեթիանա Գոլ  
Ալսել Մանթապեան  
Արմէն Մովսէսեան  
Վիքթորիա Մորճիկեան  
Նիքոլա Նաքքաշեան  
Ռազմիկ Նալպանտեան  
Էմիլիո Փոհանեան  
Սոֆիա Սաֆարեան  
Արիս Սամանճեան



ծառայութիւն կատարեցիք. կ'ուզենք անդրադառնալ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ձեր սկաուտ եղբայրները եւ քոյրերը, որոնք չկարողացան մասնակցիլ այս ընդհանուր բանակումին, այս օրերուն անոնք հանրային ծառայութիւն կը մատուցանեն, Լիբանանի մէջ տիրող այժմու ծանր իրավիճակին հետեւանքով գաղթական դարձած լիբանանցիներուն:

Յատուկ կերպով կ'ուզենք անդրադառնալ Իրաքի շրջանին, որ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին վերամիացումէն ետք, հակառակ երկրին մէջ տիրող անկայուն վիճակին, առաջին անգամ ըլլալով կը մասնակցի համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումին:

Ողջոյնի եւ գնահատանքի խօսք կ'ուղղենք Իրանի «Արարատ», «Սիփան» եւ «Նայիրի» միութիւններուն, որոնք պատկառելի թիւով եւ օրինակելի ձեւով

մասնակցեցան այս բանակումին, այնպէս ինչպէս միշտ ներկայ եղած են մեր բոլոր ձեռնարկներուն:

Այս արարողութեամբ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրր բանակումը կը հասնի իր աւարտին, բայց Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը անընդհատ կը շարունակուի ի Հայաստան եւ ի սփիւռու աշխարհի, իր վեհապանծ նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին շուրջ ուռճացնելով իր շարքերը:

Մենք այս հանդիսութիւնը կը կոչենք եզրափակիչ հանդիսութիւն, եզրակացութիւնը կը ձգենք ձեզի, դացէք եւ տարածեցէք ինչ որ ստացաք...

Պատե՛հ առիթը համարելով, Կեդրոնական Վարչութեան անունով գնահատանքի եւ երախտագիտութեան մեր խօսքը կ'ուղղենք հիւրընկալ շրջանին՝ Հ.Մ.Ը.Մ.-ձ.Ա.Ս.Կ-ի Կեդրոնական Վար-

չութեան, բանակումի գործադիր մարմնի բոլոր խմբապետներուն, որոնք ոչինչ խնայեցին բանակումին յաջողութեան համար: Գնահատանքի խօսք նաեւ պատուիրակութիւնները գլխաւորող խմբապետներուն, որոնք իրենց սերտ գործակցութեամբ սատար հանդիսացան աշխատանքներու յաջողութեան: Վերջապէս, գնահատանքի խօսք մեր խոհարար ու մատակարար անձնակազմներուն եւ բանակումին բարոյապէս ու նիւթապէս նեցուկ կանգնած անձերուն:

Միրելի քոյրեր եւ եղբայրներ, Գիշ ետք միասնաբար պիտի երգենք ցտեսութեան երգը. այո՛ միայն ցտեսութիւն մըն է եղբայր, միայն ցտեսութիւն... պիտի կազմենք շղթայ մը աննրկուն:

Բարի եր'թ բոլորիդ:

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

# HOTEL

★ ★ ★

## PAVILLON MONCEAU

### PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating/air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com



Հ.Մ.Ը.Մ.ի  
Կեդրոնական  
Վարչություն  
անդամ եղբ. Կարպիս  
Գապասագալեան  
կը փոխանցե  
իր խօսքը:

# Ի ՄԻ ՀԱՒԱՔՈՒԻԼ

**(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔԸ, ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՏՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ)**

Հոգեշնորհ Հայր Սուրբ,  
Հ.Յ.Դ. Բիւրոյի մեծայարգ ներկա-  
ցացուցիչ,

Յարգարժան հիւրեր,

Միւրեքի քոյրեր եւ եղբայրներ,

Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կա-  
ռուց դառնալիս ետք, ապա՝ համա-  
Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքի վերածուելիս  
ի վեր, սա Տրդ ընդհանուր բանակումն է  
որ տեղի կ'ունենայ:

Առաջին չորսը տեղի ունեցան օտար  
կամարներու ներքեւ: Օրին այլ ընտ-  
րանք չկար, սակայն հինգերորդէն  
սկսեալ՝ Հայաստանի վերանկախացու-  
մով, յաջորդական Կեդրոնական Վար-  
չութիւններ, Հ.Մ.Ը.Մ.ի դաւանած սկզբ-  
բունքին մեկնելով, ընդհանուր բանա-  
կումները կատարեցին մայր հայրենիքի  
հողին վրայ: Այլ ընտրանք չունէին եւ  
պիտի չունենան. ի մի հաւաքել հայրենի  
երկիրքէն դուրս գործող Հ.Մ.Ը.Մ.ի  
սկառուտական կազմերը:

Անկասկած, որ սա պահուն մեզմէ  
իւրաքանչիւրին պատած է անբացատ-  
րելի հրճուանք մը: Հոգին ու միտքը  
կ'ապրի առանձնայատուկ զգացումնե-  
րով, որոնցմով մենք ինքնաբերաբար

կը վերանանք մեր աշխարհէն եւ բոլորս  
միատեղ կը վերադառնանք հո՛ս, մայր  
հայրենիքի հողին վրայ, Արագածի փէ-  
չերուն տարածուող այս հողատարած-  
քին վրայ, անկէ մշտնջենական սնունդ  
առնելու եւ մեր ուխտը վերանորոգե-  
լով՝ Արարատին դիմաց կանգնած ըսե-  
լու. «Օր մը անպայման պիտի հասնինք  
լանջերուդ»:

Միւրեքիներ,

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումնե-  
րու նպատակին առաջին կէտէն մեկ-  
նած, պիտի ուզեմ որ բոլորս միատեղ  
լաւապէս ըմբռնենք անոր թելադրան-  
քը:-

♦ Ի մի հաւաքուիլ կը նշանակէ միա-  
սին խորհիլ, միասին գործել եւ միասին  
ապրիլ:

♦ Ի մի հաւաքուիլ կը նշանակէ միա-  
սին զգալ ու միասին ուրախանալ:

♦ Ի մի հաւաքուիլ կը նշանակէ միաս-  
նաբար յաղթահարել ամէն տեսակի  
դժուարութիւններ եւ նեղութիւններ:

♦ Ի մի հաւաքուիլ կը նշանակէ իրա-  
րու օգնել, ձեռք-ձեռքի հաստատ քայլե-  
րով ընթանալ եւ իբրեւ մէկ բազուկ զօ-  
րանալ:



## ԲԱՆԱԿՈՒՄ

# 06

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Անի Սամանձեան  
Իկնաչիօ Թալաթիւնեան  
Արամ Տէր Յակոբեան  
Քարթերիսա Թոքաթեան  
Ճյորթենսիա Չանիքեան  
Օկոսթին Անալեան  
Մաթին Անալեան  
Մարիսոյ Գատէեան  
Սեսիլիա Միմոնեան  
Մարիա Էլսա Տօնիկեան  
Վանեսա Կէտիկեան  
Պէաթրիս Արալանեան  
Միքայէլ Թոքոչեան  
Ճեռնանտօ Աւագեան  
Ակսել Մերտինեան  
Եզնէլի Թոքոչեան  
Արամ Տէր Մովսէսեան  
Անահիտ Թորոսեան  
Դանիէլ Պատանեան  
Րաֆֆի Տէմիրձեան  
Կարինէ Կերկէրեան  
Գայիանէ Վարժապետեան  
Նաթալի Տէրտէրեան  
Արամ Պարաքեան  
Նատիա Պոտիկեան  
Ատրինէ Տէրտէրեան  
Կապրիէլլա Մուլլուքեան  
Վարդան Աւագեան  
Կապրիէլ Գասըրձեան

### ԼՈՆՏՈՆ

Թինա Եուսէֆիանեան  
Սերժիկ Աբելեան  
Յովիկ Պօղոսեան  
Վիգի Յովսէփեան  
Ովսաննա Արանոսեան  
Էտուին Դաւիթեան  
Այտա Պէրպէրեան  
Նապա Խլոյեան  
Մելինէ Հէքոբ  
Քարթրիսա Նաւասարդեան  
Անգինէ Եուսէֆիանեան  
Պիանքա Ալիպեան



Ի վերջոյ՝

♦ Ի մի հաւաքուիլ կը նշանակէ միասին յաջողիլ:

Լաւապէս պիտի ըմբռնէք, որ մեր մէջ չկայ արեւմտահայ կամ արեւելահայ, հայաստանցի հայ թէ ամերիկահայ, իրաքահայ թէ ֆրանսահայ, սուրիահայ թէ գանատահայ, եւ տակաւին...: Կայ միայն ու միայն ՀԱՅ:

Այս է եղած Հ.Մ.Ը.Մ.ի մնայուն պատգամը եւ այս հասկացողութեամբ,

ըմբռնումով ու հաւատքով է որ մէկտեղուած ենք հոս, սրբազան հողի վրայ, ուր մեր նախահայրերը քալեցին անվերապահ՝ կերտելու համար մեր հայրենիքը:

Այսօր, աւելի քան երբեք, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական սկառտներ, լաւապէս պիտի իւրացնէք ձեր նշանաբանը՝ հաւատքով ու նուիրումով պիտի գործէք «Միշտ Պատրա ստ՝ հայրենիքին համար» եւ ոչինչ պիտի զլանաք անոր:

Առաւել եւս, ձեր խոստումին ու երդումին յանձնառութեամբ հաւատարիմ պիտի մնաք Հ.Մ.Ը.Մ.ի վեհ սկզբունքներուն եւ անաղարտ պիտի պահէք մեր փառապանծ նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուրք»:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով բացուած կը յայտարարեմ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրոյ բանակումը, բարի ու յաջող երթ կը մաղթեմ ձեր բոլոր աշխատանքներուն:

**FREDDY KARAGEUZIAN**

**"ONNIG OF CAIRO"**  
Egyptian Museum

Tahrir Square - Cairo

Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: [freddy@gega.net](mailto:freddy@gega.net)



# ԱՐԺԱՆԻ ՄՆԱՆՔ ԵՒ ԱՐԺԱՆԻ ԼԻՆԵՆՔ ՆՈՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ  
ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԽՕՄՔԸ,  
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒ  
ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

Հայաստանի Հանրապետության պաշտպանության յարգարժան փոխ նախարար,

Համա-Հ.Մ.Ը.Մ.Վ.ական Տրդ Բանակումի մասնակիցներ,

Սիրելի հիւրեր,

Համա-Հ.Մ.Ը.Մ.Վ.ական Տրդ Բանակումի նախավերջին օրը մեր ուխտատեղին դարձաւ Սարգարապատը: Այսօր, երբ արդէն հետեւում են մնացել բանակումի անցած 9 օրերը, վստահաբար կարող ենք փաստել, որ մեր բանակումը միայն բանակում չէր, մեր բանակումը միայն հաւաք չէր հայրենիքի մէջ, մեր բանակումը տօնախմբութիւն չէր, այլ ուխտագնացութիւն՝ դէպի հերոսական անցեալ: Այո, մենք այլեւս պէտք է հասկանանք, որ հպարտանալ է պէտք ոչ միայն եկեղեցիներով, գեղեցիկ շինութիւններով, այլ՝ մեր հերոսական անցեալով, ներկայով, որով տէր պէտք է դառնանք մեր ապագային:

Սիրելիներս,

88 տարի առաջ երկունքի ցաւերի մէջ էր մի բռու տառապեալ ժողովուրդ:

Այստեղ, այս մարտադաշտում մի քանի ժամերի ընթացքում պէտք է որոշուէր մեր ժողովրդի լինելութեան հարցը: Այս դաշտավայրում հայ ժողովուրդը 88 տարի առաջ տուեց իր կենսագրութեան ամենահերոսական ճակատամարտը եւ այստեղ ծնուեց Հայաստանի Հանրապետութիւնը: Դարեր շարունակ պետականութեան կարօտ, դարեր շարունակ պետութիւն երազած եւ դեռ Յեղասպանութիւնից ուշքի չեկած, Ֆիզիքապէս հիւժուած ու սովի ճիրաններում յայտնուած մի ազգ, իր արեան գնով պարտադրեց աշխարհին քարտէսի վրայ դրոշմել «Հայաստանի Հանրապետութիւն» անունը: Յետոյ, Ղարաբիլիսայով ու Բաշ Ապարանով աւելի հաստատուն էր դառնալու այն, որ Սարգարապատի յաղթանակը պատահականութեան արդիւնք չէր եւ, որ հերոսական հայ ժողովուրդը ի վիճակի էր պայքարել իր անկախութեան համար եւ արժանի էր ունենալու այն:

Սարգարապատը մեր երազանքների իրականութեան սկիզբն էր միայն: 20րդ



## ԲԱՆԱԿՈՒՄ 06 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Ռապմիկ Բէհեան  
Նշան Մինասեան  
Լուսինէ Նաւասարդեան  
Ալեակ Չոջադայեան  
Անի Պապլանեան  
Թինա Օհանեան  
Մատլէն Թադէոս  
Մելինէ Մինասեան  
Լեոնիկ Նասէրի  
Ալէն Դաւիթեան  
Յարութ Աբանոսեան  
Շանթ Պապլանեան  
Նանէ Իսահակեան  
Քրիստափոր Թայ  
Քրիստափոր Մեսրեան  
Հերոս Չոջադայեան  
Նարինէ Թէյմուրեան  
Վարազ Աթանոսեան  
Անի Եղիկեան  
Շադիկ Պէշիրեան  
Նարպէ Մինասեան  
Ժոպէֆ Թադէոս  
Անտրէ Ֆանուսի  
Անի Քարիմի  
Անոյշ Գասպարեան  
Ալէքս Աւագեան  
Յակոբ Գրիգորեան  
Նաթաշա Թայ  
Արթին Էտկարեան  
Արի Պողոսեան

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍ  
Մաքսիմ Աճէմեան  
Պողոս Մահպուրեան  
Լիլյա Գալիպքեան  
Կոնս Չաքրեան  
Ալէքս Աստուրեան  
Կարպիս Փիլիպոսեան  
Խաչիկ Տարազճեան  
Սեսիլիա Քիլիճեան  
Շիրապ Մուրատեան  
Սիփան Մուրատեան  
Արմէն Նաճարեան



դարասկզբին Սարգարապատով հիմք դրուեց Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստանի տեսլականը: Եւ այդ տեսլականով առաջնորդուած, սերունդները շարունակեցին յաղթական երթը մինչեւ Արցախ եւ դեռ շարունակուելու է այն մինչեւ մեր նպատակների իրականացումը՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտումը:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Մենք այսօր միասին կանգնած ենք մի վայրում, որտեղ անցած դարասկզբին կանգնած էին մեր պապերը: Մի տարբերութեամբ, նրանք պատրաստուում էին ճակատագրական ճակատամարտին, մենք եկել ենք մեր խաղաղ հայրենիքում խնկարկելու, յարգելու նրանց պայծառ յիշատակը: Վստահ եմ

որ, ձեր պապերից շատերն այդ օրերին գտնուել են Սարգարապատում եւ մարտնչել են յանուն հայոց պետականութեան: Վստահ եմ, որ ձեր պապերի բազկի ուժը փոխանցուած է ձեզ եւ վստահ եմ, որ ապագայի նոր Սարգարապատներում ձեր մէջ նիրհից կ'արթնանան Դրոներն ու Սիլիկեանները, Փրոնուեաններն ու Նազարբէկեանները, Մանուկեաններն ու Ղորղանեանները:

Սիրելիներս,

Հ.Մ.Ը.Մ.ը սոսկ սկառուական եւ մարմնակրթական միութիւն չէ, այն աւելին է: Հ.Մ.Ը.Մ.ը կամաւոր բանակ է եւ Հ.Մ.Ը.Մ.ն էր, որ 70 տարի շարունակ սփիւռքահայ գաղթօճախներում հայոց բանակի մարմնացումն էր եւ պատահական չէր, որ անցած դարավերջի Ար-

ցախեան ազատամարտին Հ.Մ.Ը.Մ.ը եւս իր աշխոյժ մասնակցութիւնը ունեցաւ: Մեր միութիւնը պատմութիւն ունի եւ մենք հպարտ ենք մեր պատմութեամբ: Մենք հպարտ ենք, քանզի ապրեցինք եւ աշխատեցինք առաջին Հանրապետութեան օրոք, ծնուեցինք նրա հետ ու դեգերեցինք երկրէ-երկիր, 70 տարի շարունակ հպարտ պահեցինք հայոց Եռագոյնը եւ տէր եղանք Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսլականին: Մենք առաջիններից մէկն էինք, որ վերադարձանք անկախ հայրենիք եւ առաջիններից ենք լինելու նոր Սարգարապատներում: Արժանի մնանք եւ արժանի լինենք նոր Սարգարապատին՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտման ճանապարհին:



**Sarkis  
or  
Paul**

# SASSOUNIAN INC.

## Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street  
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220  
(213) 627-1206  
Outside Ca: 1-800-544-4419  
Fax: (213) 623-6981

[www.sassouniantools.com](http://www.sassouniantools.com)

E-mail: [info@sassouniantools.com](mailto:info@sassouniantools.com)



## ՊԱՀԱՆՉԱՏԵՐ ԵՆՔ ՄԵՐ

# ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ՏՏԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

Միրելի քոյրեր եւ եղբայրներ,  
Քիչ առաջ, մենք միասնաբար այցելեցինք Եռաբլուրի բարձունքին վրայ հանգչած, մեր Դատին համար զոհուած անմեռ նահատակներու շիրիմները:

Այժմ մեր աչքերը խոնարհած ենք Ծիծեռնակաբերդի անմար կրակին, որ բնագոյաբար մեզ կը մղէ մեր մարմինն մէջ շրջան ընող արեան իսկութեան եւ արմատներուն խորքը երթալու:

Անցեալի՝ 1915ի ջարդարար թուրքին կատարած Յեղասպանութիւնը կը տեսնենք: Յեղասպանութիւն, որ այսօր կը շարունակուի այլ ձեւերով եւ որուն համար մեր քաջարի մարտիկները իրենց կեանքը կը զոհեն Հայ Դատի բազինին:

Եկէ՛ք, հետեւաբար, միասնաբար հարց տանք, թէ ինչո՞ւ գտնուեցանք եւ կը կանգնինք այս երկու սրբազան վայրերուն մէջ:

Անկասկած, որ մեզմէ իւրաքանչիւրը հոգեչունչ այս երկու վայրերուն մէջ իր հոգին ընդերքը յուզումի զգացում ունեցաւ:

Միրելիներ,

Այս երկու վայրերը մեզի համար սրբազան հաղորդավայրեր են, որոնցմով մենք պարտաւոր ենք հաղորդուելու մեր նահատակներուն թափած արեան ամէն մէկ կաթիլով, որուն շնորհիւ այսօր մենք հոս կանգնած ողջ աշխարհին կ'ըսենք. մենք կ'անք եւ պահանջատէր ենք մեր անժամանցելի իրաւունքներուն:

Միրելիներ,  
Մեր մէկուկէս միլիոն նահատակները անգամ մը եւս ջարդած պիտի ըլլանք՝ եթէ երբեք կորսնցնենք մեր լեզուն ու մշակոյթը, մեր պատմութիւնն ու հաւատքը:

Հայ Դատի գաղափարականին զոհուած մեր մարտիկները մեզ երբեք պիտի չներեն, եթէ երբեք մենք հայօրէն չապրինք ու չգործենք, անտարբեր գտնուինք մեր ժողովուրդի պահանջներուն:

Այժմ ձեզմէ պիտի խնդրեմ, որ մեր նահատակներուն հետ հաղորդուելու համար ինքնամոտիտուիք ձեր հոգիներուն մէջ եւ երկու վայրկեան պահէք քար լուծիւն, որմէ ետք անոնց երկնային հովանիին ներքեւ, ամենայն գիտակցութեամբ մենք պիտի կատարենք մեր ուխտը.՝

Կ'ուխտենք՝

- «1. Հաւատարիմ մնալ մեր մեկուկէս միլիոն նահատակներու կտակին եւ յաւիտեան պահել անոնց յիշատակը:
- «2. Անմար պահել մեր ազատամարտիկներուն յիշատակը:
- «3. Պայքարիլ այլասերման եւ ապագայնացման դեմ՝ պահպանելով հայ լեզուն, հայ մշակոյթը եւ ազգային նկարագիրը:
- «4. Հետապնդել մեր ազգային պահանջատիրութեան անժամանցելի դատը»:



# ԲԱՆԱԿՈՒՄ 06 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Վանտա Սարգիսեան  
Վարդան Սարգիսեան  
Նայիրի Սիսեռեան  
Վանայ Քէլիճեան  
Կարինէ Քէլիճեան  
Գարօլին Շաքէլեան  
Կարէն Պազգալեան

**ՅՈՒՆԱՍՏԱՆ**  
Գոհար Ալեանաքեան  
Վիգէն Մինասեան  
Լոռի Պարալեան  
Եղիշէ Շահապալեան  
Անդրանիկ Շահապալեան  
Առաքել Ճամուլեան  
Արմէն Բախանեան  
Ճորճ Սելիմեան  
Արմէն Միխայիլիտիս  
Մկուշ Խոճոյեան  
Անասթասիա Գուլումճեան  
Մէրի Խարայամպիտու  
Մարի Տանկուրեան  
Բանայրօթի-Մարինօ Գապարու  
Գրիգոր Չաքմաքճեան  
Հայկան Չաքմաքճեան  
Միհրան Պերդուտեան  
Ճորճ Սթամպուլեան  
Նայիրի Հալլաճեան

**ԱՒՍՏՐԻԱ**  
Յարութիւն Շատոյեան  
Թամար Շատոյեան  
Կարօ Շատոյեան

**ԼԻԲԱՆԱՆ**  
Դաւիթ Գապանճեան

**ՍՈՒՐԻԱ**  
Շանթ Կեցոյեան  
Յարութ Կեցոյեան  
Դաւար Պարուշեան  
Մարթա Պարուշեան  
Փաթիլ Սանոսեան



# ԲԱՆԱԿՈՒՄ

## 06

### ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Սարի Շուէիթ  
Վրէժ ճուլեան  
Շաղիկ Խաճարեան  
Րաֆֆի Մուրաֆեան  
Լուսին Սարգիսեան  
Գէորգ Սարգիսեան  
Վիգէն Գարաձեան  
Սազօ Տիշէքէնեան  
Նայիրի Չաքոյեան  
Նայիրի ճունտուրեան  
Սեդրակ Յովսէփեան  
Մեղրի Պետրեան

Էլո Քէշիշեան  
Յակոբ Տնտրլեան  
Անյշ Գէորգեան  
Փաթիլ Խաճարեան  
Եղիա Քիլէճեան  
Պերճ Թիւֆէնկճեան  
Գէորգ Փայասլեան  
Յակոբ Գապագեան

Անդրանիկ Խաչատուրեան  
Հրակ Տնտրլեան  
Սարգիս Քիրապեան

#### ՅՈՐԳԱՆԱՆ

Սեւան Չաքմաքեան  
Նանի Ինգապապեան  
Լուսին Գուլաքսրպեան  
Չուարթ Տէմիրճեան  
Յարութ Օերունեան  
Ճոն Տէրտէրեան  
Օրելի Անտոնեան  
Կասիա Տէմիրճեան

#### ԵՐՈՒՍԱՂԷՄ

Րաֆֆի Եպեկեյեան  
Յարութ Պաղամեան  
Ռուբէն Նալպանտեան  
Գէորգ Թաշճեան  
Յարութ Հինտոյեան  
Լեւոն Հինտոյեան  
Չոհրապ Գրիգորեան  
Սարօ Նալպանտեան



## ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ բանակումը, նախորդներուն նման, ունեցաւ իր նշանաբանը («Միշտ պատրաստ՝ հայրենիքի համար»), նշանակը (հեղինակ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Զարեհցաւանի սկառտներէն եղբ. Վարդան Այվազեան) եւ քայլերգը (Խօսք՝ Լեւոն Շամլեանի, երաժշտ.՝ Սեդօ Պաղտասարեանի):

● Բանակումին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Կարպիս Գապասագալեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Յարութիւն Յարութիւնեան եւ Սարգիս Տէր Պետրոսեան: Եօթը այլ անդամներ բանակումին միացան նախավերջին օրը, իրենց մասնակցութիւնը բերելով Սարգարապատ այցելութեան եւ փակման հանդիսութեան:

Բանակումէն ետք, Կեդրոնական Վարչութիւնը իր լիազօրմար ժողովը կատարեց Երեւանի մէջ:

● Յուշանուէրներու բաժինը եղաւ

բաւական ճոխ: Բանակումի գործադիր մարմնին նախաձեռնութեամբ պատրաստուեցան եւ բանակողներուն տրամադրութեան տակ դրուեցան թի-շերթներ, գլխարկներ, պայուսակներ (կոնսակի, մէջքի, գրպանի...), փողկապի սեղմիչներ, ջրամաններ, գրիչներ, վիզի եւ բանայլի կախիչներ պէճեր, ձեռքի փլասթիքէ գունաւոր կապեր, գաւաթներ եւ այլն:

● Երեկոնբը խարուկահանդէսները յատուկ «համ ու հոտ» տուին բանակումին: Ու պատահեցաւ, որ երեկոյ մը բանակավայրը հիւրընկալեց հայրենի երգիչներ Լէյլա Սարիբէկեանը, Արսէն Գրիգորեանը եւ Սմբատ Երանեանը, որոնք ժողովրդային սիրուած երգերով խանդավառ մթնոլորտ մը ստեղծեցին:

● Քարոզչական բաժինը ունեցաւ իր կարեւոր տեղը: Օրը-օրին բանակումին անցուկարձերուն մասին թղթակցութիւններ յղուեցան Հայաստանի եւ Սփիւռքի թերթերուն: Պատկերասփիւ-





ուի «Երկիր-մեդիա» կայանին նկարիչը կատարեց Տի.Վի.Տի-ի նկարահանումները, իսկ լուսանկարիչ Յարուսթին Վարդանեան «Մարզիկ»-ին համար նկարեց մեծաթիւ նկարներ:

«Մարզիկ»-ին նկարներ տրամադրեցին նաեւ եղբայրներ Պերճ Ճամճեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ), էրիք Արապեան եւ Տիրան Շահինեան (Գանատա):

● Բանակումին գլխաւոր նորութիւնը եղաւ հեռաձայնի եւ ինթըրնէթի կեդրոնը, որ բանակողներուն առիթը ընծայեց ազատ ժամերուն հաղորդակցելու իրենց ծնողներուն եւ հարազատներուն հետ:

● Ազգային եկեղեցական եւ հասարակական դէմքերու շարքին, բանակավայր այցելեց Հայաստանի գիւղատնտեսութեան նախարար Դաւիթ Լոբեան: Նախարարը Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին հետ հանդիպում մը ունենալով, մօտէն ծանօթացաւ բանակումին ընթացքին եւ բանակողներու տրամադրութիւններուն:

● Ինչպէս միշտ, այս բանակումը եւս ունեցաւ իր գրքոյկը, որ 48 էջերով բանակողներուն ներկայացուց պատմական տեղեկութիւններ սկառուտութեան, համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումներու եւ իրենց այցելելիք վայրերուն մասին:

Առաջին անգամ ըլլալով, լոյս տեսաւ նաեւ բանակումին անգլերէն պոռչիւրը, որ Հայաստանի մեծագիւր քարտէսին կողքին, ամփոփ տեղեկութիւններ փոխանցեց հայոց պատմութեան, մշակոյթին եւ Հայաստանի տեսարժան վայրերուն մասին:

● Երեւանի «Արարատ» շեփորախումբը իր մասնակցութիւնը բերաւ բանակումին ճոխացման: Մարդարապատի յուշահամալիրին առջեւ եւ Երեւանի «Հանրապետութեան» հրապարակին վրայ, բանակողները տողանցեցին շեփորախումբին առաջնորդութեամբ:

Տեղին է նշել, որ Հ.Մ.Ա.Կ-ի սկառուները իրենց հետ բերած էին կարգ մը նուագարաններ որոնցմով անոնք խանդավառ մթնոլորտ ստեղծեցին բանակավայրին մէջ:

● Հ.Մ.Ը.Մ-ի Պաղտատի սկառուները բանակավայրը գեղեցկացուցին ձեռագլին մեծ աշխատանքով մը, որ կը ներկայացնէր բանակումին նշանակը:

Սկառուներուն հետ, բանակումին բացման եւ փակման ներկայ գտնուեցաւ, Պաղտատէն Տ. Նարեկ Քհչյ. Իշխանեան:

● Բանակումին բացման եւ փակման հանդիսութիւններուն հաճելի ներկայութիւն եղաւ Քուէյթի վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Յովհաննէս Աւագեանը («Էմմի»), որ հակառակ 80ը անց տարիքին, իրմէ անբաժան վիտեօ-քամերայով նկարեց յիշատակելի պահեր:



# ԲԱՆԱԿՈՒՄ

## 06

### ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

- Գէորգ Նալպանտեան
- Յարութ Սահակեան
- Փօլ Նաճարեան
- Արօ Սահակեան
- Սուէ Գրիգորեան
- Կարին Նալպանտեան
- Արմիկ Գասապեան
- Դանիէլ Շահինեան
- Յակոբ Մուրաճայեան
- Յակոբ Շահինեան
- Մանօ Բանոյեան
- Թամար Գաթրեան
- Արեւ Շահինեան
- Բաֆֆի Մուրաճայեան
- Լեւոն Թաշճեան
- Թալին Փամպուրեան
- Արմէն Ալամեան

#### ԻՐԱԲ

- Գրիգոր Պաթմանեան
- Արա Քիշմիշեան
- Պերճ Թիւֆէնկճեան
- Վարդգէս Սերէնկիւղեան
- Բաֆֆի Թովմասեան
- Անիթա Իշխանեան
- Մասիս Արծիւեան
- Մասիս Բարդաճեան
- Մասիս Վահանեան
- Արիս Մելքոնեան
- Նուպար Վարդանեան
- Հրանդ Շառոյեան
- Վիգէն Մուշեղեան
- Նորա Եսայեան
- Մուրատ Եղիապարեան
- Սազօ Պաթմանեան
- Շանթ Աւետիսեան
- Նորք Ալիպեան

#### ՔՈՒԷՅԹ

- Վիգէն Եագուպեան
- Կարապետ Գալէլեան
- Ժազ Բահրէճեան
- Կարէն Քէմանճեան

# ԲԱՆԱԿՈՒՄ 06

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Գուրգէն Գատէհձեան  
Գէորգ Յովակիմեան  
Բալիկ Արզույեան  
Շանթ Թադոյեան  
Աբրահամ Պէրպէրեան  
Արամ Նարինեան  
Տիրան Նարինեան  
Ալպէր Թորոս  
Ղազար Ղվիրէան  
Խաչիկ Կարապետեան  
Յարութ Տէր Ներսէսեան  
Աւագ Կարապետեան  
Յակոբ Տէր Ներսէսեան  
Խաչիկ Մելքոնեան  
Գէորգ Թորմաքձեան  
Անտրէ Մորա  
Սագօ Յակոբ Մարտիրոսեան

Սագօ Միհրան Մարտիրոսեան  
Ճորձ Մորա  
Ալին Աբիկեան  
Սիլվի Աշոթբանեան  
Աշոտ Գույումձեան  
Շանթ Մարտիրոսեան  
Սեւակ Քէմանձեան  
Յովսէփ Մալմանեան  
Անթոնի Տաղլեան  
Սարինէ Յարութիւնեան

Հ.Մ.Ա.Կ.

Արպի Գալստեան  
Արպի Չոհրապեան  
Արմինէ Մարգարեան  
Սիլվա Աւանեսեան  
Շանթ Բաղրամեան  
Սեւան Ալյանեան  
Ռոմիկ Դանիէլեան  
Ադրէ Յովասափեան  
Առնոյտ Յովասափեան  
Սօսէ Հաթամեան  
Արինէ Դանիէլեան  
Մինէ Աւասափեան  
Արտոյտ Չոհրապեան  
Նինելի Ծատրեան

Մելինէ Օհանի Մարգարեան  
Անի Թիլիմեան  
Նինելա Դաւթեան  
Նայիրի Չովէլեան  
Մելանի Պաղտասարեան  
Փիթր Մկրտչեան  
Արմէն Օհանեան  
Արգին Օհանեան  
Արպի Շահպէզեան  
Արպի Սուքիասեան  
Վանէ Գալստեան  
Վանիկ Արշակեան  
Թոմիկ Դանիէլեան  
Արմէն Մարգարեան  
Թամիկ Խաչիկեան

Հ.Մ. «ՄԻՓԱՆ» ՄԻՈՒԹԻՒՆ  
Նարինէ Միհրանեան  
Թելմա Խուտաբախչեան

Հ.Մ. «ՆԱՅԻՐԻ» ՄԻՈՒԹԻՒՆ  
Անտրէ Յովսէփեան  
Գեիկ Շիրվանեան  
Լինա Շահվերտեան  
Սասուն Իսկանտարեան  
Լեիկ Շիրվանեան



*Philippe Photo Trade*

# Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

**EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION  
AND TOTAL CONTROL APPLICATION**

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.  
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria  
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

*Philippe Photo Trade*

**Assadourian Bros.**

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչությունը այս քառամեակի իր Դ լիազումարը գումարեց 10Էն 12 Օգոստոս 2006ին, Հայաստանի մէջ:

Կեդրոնական վարչութեան լիազումարի նիստերուն ուսումնասիրութեան եւ քննարկման առանցքը դարձան՝

Անցնող եռամեակի գործունէութեան իրականացումները եւ անոնց ճամբով ձեռք բերուած արդիւնքներն ու յառաջիադացքը:

Շրջաններու կազմակերպական ընդհանուր իրավիճակը եւ անոնց իրագործումներն ու գործունէութիւնները. սկաուտական եւ մարզական կեանքին մէջ յառաջդիմութիւնները եւ երբեմն մատնանշուող դժուարութիւնները:

«Մարզիկ» պաշտօնաթերթի լոյս ընծայման ճամբով անոր տարածումն ու արձագանգը, յատկապէս դիմագրուած նիւթական դժուարութիւնները ու նորահաս սերունդին ընթերցելի դարձնելու կարելիութիւնները:

21րդ դարուն յատուկ եւ անոր ընթացքին պարզուած մարտահրաւերներուն դիմաց միութեանս դիմագրուած դժուարութիւնները եւ անոնց շրջանցման համար առնուած քայլերը:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրականումի աւարտով, ընդհանուր գիծերու մէջ արժեւորելով իրագործուած աշխատանքներու տարողութիւնն ու 17 շրջաններու մասնակցողներուն թիւը, ձեռնարկը նկատուեցաւ յաջող:

Սեպտեմբերին տեղի ունենալիք Միջին Արեւելքի վարչութիւններու միջ-դիւանային խորհրդածոյովի ընթացքին ուսումնասիրուելիք հարցերը եւ անոր առաջադրանքները:

2007ին, սկաուտութեան հիմնադրութեան 100ամեակին առթիւ, սկաուտական միջապգային ճամբորհին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն մասնակցութիւնը Եռագոյն դրօշի ներքեւ:

«Ծառայութեան» եւ «Արժանեաց» շքանշաններու տուչութեան կանոններու բիրեղացումը, ինչպէս նաեւ՝ միութեանս կենցաղագիտութեան եւ փրօթօրքլային հասկացողութեան ուղեցոյցին յստակացումը:

Պատգամաւորական 9րդ Ընդհանուր Ժողովին ներկայացուելիք հարցերը եւ ապագայ քառամեակներուն ուսումնասիրուելիք ծրագիրները:

Կեդրոնական վարչութիւնս իր եռօրեայ նիստերուն աշխատանքները եզրափակեց մատնանշելով, որ հակառակ ներկայ հանգրուանի մարտահրաւերներուն եւ ամէնուրեք ցցուող տեսակաւոր դժուարութիւններուն, ամէն կարելիութիւն ու ճիգ ի գործ պիտի դրուի՝ յաւելեալ արդիւնաբերութեան ձեռքբերման հեռանկարով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Երեւան, 14 Օգոստոս 2006

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայրենիքի մէջ իր վերընձիւղումէն ետք, Հ.Մ.Ը.Մ. իր 4րդ ընդհանուր բանակումը (շարքին ծրագր) կատարեց մայր հայրենիքի հողին վրայ, Արագածի փէշերուն՝ Բիրականի մէջ, 31 Յուլիսէն 9 Օգոստոս 2006ին:

«Միշտ Պատրաստ՝ հայրենիքի համար» նշանաբանով, 16 շրջաններէ շուրջ 650 սկաուտներ համախմբուեցան Եռագոյն դրօշի ներքեւ, սկաուտ մատողաշ սերունդին ջամբելով մայր հայրենիքի ճանաչողութիւնը, սէրն ու անսահման նուիրումի ոգին:

Ընդհանուր բանակումի տեւողութեան մասնակցողները այցելեցին Ս. Էջմիածին, Եռաբլուր, Ծիծեռնակաբերդ, Գառնի, Գեղարդ, Խոր Վիրապ, Սեւանայ լիճ, Ամբերդ, Սարդարապատ, ինչպէս նաեւ վանապան յուշարձաններ:

Բանակողները Հ.Մ.Ը.Մ.ական իրենց դաստիարակութիւնը վերածեցին գործի, հանրային ծառայութեան օրուան կազմակերպումով՝ Կիւմրիի շրջանին մէջ. անոնք մաքրեցին դարաւոր վանքեր, լքուած եկեղեցիներ, մանկատուններու մէջ ձեռք երկարեցին որբերու, ծերանոց այցելութեամբ ժպիտ տուին մեր մամիկներուն ու պապերուն, դպրոցներէն ներս մաքրութեամբ տուին յաւելեալ փայլք:

Աննկարագրելի ոգեւորութեամբ 10 օրերու ընթացքին հայրենի ժողովուրդը ամէնուրեք մեծ գոհունակութեամբ դիմաւորեց ապգային գաղափարախօսութեան

պիւնտրեալ Հ.Մ.Ը.Մ.ի «Կամաւոր Բանակ»ը՝ անոր շքերթին եւ առինքնող կեցուածքին ընդմէջէն ողջունելով ջրվիժումը Հ.Մ.Ը.Մ.ի ոգիին կենսունակութեան գաղտնիքին, որ աշխարհասփիւռ ժողովուրդի մը պատկանէին կր պատրաստէ հայրենակերտ սերունդներ՝ անոնց փոխանցելով հայ մարմնակրթական եւ ապգային կեանքի ծառայութեան դրօշը:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին մասնակցող սկաուտները պանծալի Եռագոյն դրօշով տողանցեցին «Հանրապետութեան» հրապարակին վրայ, իբրեւ ողջոյնի արտայայտութիւն Հ.Մ.Ը.Մ.ի տարագիր այն բոլոր սերունդներուն, որոնք դրօշարշաւի արագութեամբ, կանոնաւորութեամբ եւ պատասխանատուութեամբ, Սփիւռքի մէջ ապգային մեր իտեպներուն դրօշը փոխանցեցին իրարու յաջորդող սերունդներուն, ի փառս Հայաստանի, ի պատիւ Հ.Մ.Ը.Մ.ին, պարծանք հայրութեան:

Բարձրանալու եւ բարձրացնելու իմաստութիւնը հայրենիքին, ապգին ու միութեան նուիրումին մէջ գտնող Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին սկաուտները համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրականումը աւարտեցին յաջողութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Երեւան, 11 Օգոստոս 2006

# «Միշտ Պատրաստ» Հայրենիքի Համայն»

